



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Աստղագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

438

ՀԱՅՈՒՄ ՀԱՅՈՒՄ ՎԵՐԱԴՐՈՒՄ ՎԵՐԱԴՐՈՒՄ

№ 5

№ 5


Դ. ՏԱՊԻՐՈ

ՄԵՐ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ
ՈՒՂԻՆԵՐՆ
ՈՒ ՀԵԹՄՆԿԱՐՆԵՐԸ

Թարգմ. ՎԱՐԴ-ԿԱՍՍԱՐ

ՅԵՐԵՎԱՆ

1930




№ 5 ՀԱՅՏԱՄՐԿՈՂ № 5

ԸՐԻԱՆԻՆԵՐԻՑՆԵՐՆ ԿՈՂՊԵՐԾՈՒՅԹԻ ՄԵԽԵՑՆԵՐՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Դ. ՀԱՊԻՐՈ

338.4:67(47)




ԱԱՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ ՔԵՐԱՎԱՐՆԵՐՆ

A 43553

14384

Թարգմանեց ՎԱՐԴ-ԿԱՄՍԱՐ



ԳՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱՄՐԿՈՂԻ

1980 թ. ՅԵՐԵՎԱՆ

ՀԱՅՈՒՆԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 2792
ԳՐԱՌԵՊՐԵՆԱՎԱՐ 5209 (բ.)
ՏԻՐԱԺ 1000

I. ՀԻՄՆԱԿԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆՈՒԹԵՐԸ

Միութենական կենտվիճակարի տեղեկությունների համաձայն, բոլոր տեսակի մանրագույնաբերության մեջ զբաղված անձանց թիվը 1926—27 տարում կազմում եր մոտ 4 միլիոն, իսկ արտադրանքը՝ 4,6 միլիարդ ռուբլի կամ ամբողջ արդյունաբերության մեջ զբաղված աշխատավորների 57,1 տոկոսը և արտադրանքի՝ 22,4 տոկոսը:*)

Բոլոր տեսակի մանր արդյունաբերության մեջ (արհեստագործական կոոպերացիայի հետ միասին) զբաղված անձանց թիվը, Միութենական Պետպլանի հնդամյա ծրագրի վերստուգիչ թվերի համաձայն, 1927—28 թվին հասել եր բավական զգալի չափերի՝ 4,1 միլիոնի, վոր համարյա յերկու անգամ զերազանցում ե խոչը արդյունաբերության մեջ զբաղված մշտական բանվորների թիվը: Բավական պատկառելի յեր նաև նրա արտադրանքը, ալյուրաղացնե-

*) Մանոքություն՝ ահս «ԽՍՀՄ-ի վիճակագրական տեղեկատու, 1928 թ., կենտվիճակարի հրատարակություն, Մոսկվա, 1929 թ.»

բի հետ միասին կազմելով 4,7 միլիոնդ ռուբլի
 կամ առանց նրանց՝ 3,1 միլիարդ ռուբլի, վոր
 ալյուրաղացների հետ միասին, Միութենական
 Գերժողականտխորհի կողմից պլանավորվող խո-
 չը արդյունաբերության արտադրանքի հա-
 մեմատությամբ, կազմում և 45 տոկոս, կամ
 առանց ալյուրաղացների 33 տոկոսը։ Արդյու-
 նաբերության առանձին ճյուղերում մանր ար-
 դյունաբերության նշանակությունն ե'լ ավելի
 զգալի յէ, հասնելով խոչը պետական կոշկա-
 կարական և կաշվեգործական արդյունաբե-
 րության համեմատությամբ 170 տոկոսի,
 դերձակների՝ 168 տոկ., մասսայական սպա-
 ռողական մետաղյա իրերի արտադրության՝
 100 տոկոսի և այլն։

Թեև մանր և տնայնա-արհեստագործա-
 կան արդյունաբերությունը վերջին ժամանակս
 տնտեսության ընդհանուր հաշվեկշուի մեջ
 կորցնում է իր տեսակարար կշիռը, բայց և
 այնպես բացարձակ թվով նա տարեցտարի ա-
 ճում է։

ՄԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍ ԶԲԱՂՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԹՎԻ (ՄԻԼԻՈՆՆԵՐՈՎ)

1920	թ.	· · ·	1,6	1924-25	թ.	· · ·	2,8
1922-23	թ.	· · ·	2,0	1925-26	թ.	· · ·	3,3
1923-24	թ.	· · ·	2,3	1926-27	թ.	· · ·	3,9

Մանր արդյունաբերությունն իր ազդեցու-
 թյունը կենտրոնացրել է ուրույն ճյուղերի վո-
 րոշ խմբում։ Այդ ճյուղերի մի քանիսի մեջ նայ

Հանդիսանում ե արտադրության զերակշռող ձեր, գտ զորպագործությունն ե, խսիրագործությունը, թիթեղյա և յերկաթյա ամանեղենի արտադրությունը, թաղիքե կոչկակարությունը, մորթե մուշտակագործությունը, տանձտ-թամբագործությունը, զեղարվեստական առեղնագործությունը, ժանյակագործությունը, խաղալիքների և յերաժըշտական գործիքների արտադրությունը և այլն։ Այդ խմբի ուրիշ ճյուղերի մեջ նույնի չտփագանց զգալի տեսակարար կշիռ։ Դա զերձակությունն ե, կաշվե կոչկակարությունը, կահ-կարասիների և անիվ-փոխադըրական միջոցների արտադրությունը, մետագործությունը, համի և սննդի արտադրությունը և այլն։

Հաստ Միութենական կենտվիճվարի տվյալների, ամբողջ արդյունաբերության ճյուղերի առանձին խմբերի մեջ մանր արդյունաբերության տեսակարար կշիռը 1926—27 թվին արտահայտվում եր հետեւյալ ձևով։

ՄԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ,
ԸՆՏ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐԺԵՔԻ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ

ԱՊԱԽՉԻՆ ՃՅՈՒՆԵՐԻ ՄԵՋ

ԸՆՏ ԹՎԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ (ՏՈԿՈՍՆԵՐՈՎ)

Կաշվեգործություն	31,1
Մուշտակագործություն	70,2
Կաշվե կոչկակարություն	74,5
Հագուստեղեն և արդուղարդ	70,0

Այս թվում դերձակություն	72,1
» » հյուսվածքաղործություն . . .	41,7
Գիտական-դեղաբարվեստական արտադրություն	
» » » 49,3	
Համի և սննդի արտադրություն	43,1
Այս թվում ալյուրաղացի արտադր	61,9
» » հրուշակաբանի արտադր	34,9
» » ձիթի արտադր	32,3
Մետաղի (սե) վերամշակություն	36,9
Փայտի » »	29,6
» քիմիական »	23,2
Կուպրի և ձյութի արտադրություն	30,0
Կենդանական ծագում ունեցող ամուր նյութերի վերամշակություն	30,1
Առանձնապես մեծ և մանր արդյունաբերության տեսակաբար կշիռն ազգային ֆեղերատիվ հանրապետություններում, ազգային ըրջաններում և առանձին յերկրամասերում.	

**ՄԱՆՐ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌՆ ԱՌԱՆ-
ՁԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԸՆՏ 1926—27 ՏՎՅԱԼՆԵՐԻ (ՏՊԿՈՍՆԵՐՈՎ)**

Հանրապետության անունը	% ըստ վաճ անձերի	% ըստ արտադրանքի
ԽՍՖԻՀ	55,9	21,0
ՈՒՍԽ	53,4	30,7
ԲՍԽ	72,3	54,6
ՈՒՉՍԽ	89,2	42,0
ՏՍԽ	94,3	35,8
Վրաստան	74,6	37,3

Աղբբ.	ՍԽՀ	49,0	15,7
Հայաստան		26,5	42,8
ԽՍՀՄ		57,1	22,4

ԽՍՀԽԽՀ առանձին յերկրամասերում մանր արդյունաբերության տեսակաբար կշիռը բավական զգալի յէ Սիրիում, Հեռավոր Արեգիլքում և մի շարք այլ ազգային հանրապետություններում:

**ՄԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ
ՌՍՑԻՆ ԱՌԱՆՁԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ
ԸՆՏ 1926—27 ՏՎՅԱԼՆԵՐԻ (ՏՈԿՈՆՆԵՐՈՎ)**

Երշանի անունը	% ըստ դքաղ- ված անձերի	% ըստ աշխադրանքի
Սիրիու յերկրամաս	76,9	55,9
Հեռավոր Արևելքի յերկրամաս	67,0	47,8
Կիրզիղի ԱՍԽՀ	82,6	65,0
Ղազախ ԱՍԽՀ	85,8	57,6
Ղրիմի ԱՍԽՀ	62,6	47,6
Բաշկիրների ԱՍԽՀ	75,7	50,2
Կ. Ս. շրջան	83,4	47,0
Հյուսիս-Արևելյան յերկրամաս . . .	81,4	41,4
Վրասկայի յերկրամաս	87,4	41,5
Միջ-Վորդյան յերկրամաս	80,4	38,9
Դաշտանի ԱՍԽՀ	87,7	34,1
Արևմտյան յերկրամաս	57,8	30,4
Ներքին Վոլգյան յերկրամաս	72,0	31,0

Հստ ճյուղերի կազմության մանր արդյունաբերությունը հանդիսանում է բացառապես յնպիսի արդյունաբերություն, վոր ապասար-

կում և ընդհանրապես բնակչության և տռանձնացես գյուղացիության տնտեսական ու անձնական կարիքները՝ այն արտադրում և՝ պարան, մորթի, գյուղական լծելու սարքավորում և թամբ, թաղիք, կոշիկ, տակառ, անիվ, սայլ, հյուսնի գործիք, զանազան մետաղյա իրեր և այլն։ Դրա շարքում մանր արդյունաբերությունը տալիս է նաև արտադրական պահանջի արտադրանք, մասնավորապես՝ խսիր, տակառի տախտակներ, անտառքիմիական նյութեր, յերկաթյա ամանեղեններ և չինարարական նյութեր։ Մանր արդյունաբերության արտադրանքի մի քանի տեսակներն ունեն նաև արտածման (եքսպորտային) նշանակություն—գորգեր, գեղարվեստական իրեր, ժանյակներ, տակառի տախտակ, ձյութ, խաղալիքներ և այլն։

ԱՌԱՆՁԻՆ ՃՅՈՒՂԵՐԻ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵջ ՆՅՈՒԹԵՐՆԵՐԻ ՄԵջ

ԸՆ 1926—27 թ. ՏՎՅԱԼՆԵՐԻ (ՏՈԿՈՍՆԵՐՈՎ)

Ճյուղերի անունը	$\%$ գրադադար	$\%$ արտադր.
Հագուստեղեն և արդուղարդ.	39,4	29,2
Այս թվում դերձակություն . . .	12,8	12,6
» » կաշվե կոշիկի արտադրություն	15,0	11,5
Համի և սննդի արտադրություն . . .	14,7	45,5
Փայտի վերամշակություն . . .	12,8	4,4
Մետաղի » . . .	9,4	4,9

Կաշվեկործ .—մուշտակաղործ . . .	4,2	6,0
Հանքերի հանում և վերամշա-		
կություն	2,8	0,8
Բրդի վերամշակություն	2,4	1,6
Կանեփի »	1,5	0,4

Բատ Միութենական Պետալանի հնդամյա ծրագրի վերատուգիչ թվերի, մանր արդյունարերությունն (արհեստագործական կոռպերացիալի հետ միասին), ըստ իր հիմնական ճյուղերի, հաշված և հետեւյալ ձեռով.

Ճյուղի անունը	Զբաղված անձանց թիվ՝ հաղարներով	Արտադրան- քը միլիոն ոսութիներով
Կաշվե կոչկակարություն . . .	634,4	612,6
Փայտի վերամշակություն . . .	620,5	242,9
Դերձակություն	559,3	504,7
Մետաղի վերամշակություն . . .	408,0	262,3
Ալյուրաղացի արդյունաբեր . .	284,1	1.566,2
Թաղիքների կոչկակարություն	204,3	90,9
Դեղարվեստ .—ժանյակագործ . .	130,7	11,2
Հյուսվածքագործություն . . .	107,1	65,3
Բամբակի ջուլհակություն . . .	141,9	115,7
Հացթուխներ	88,8	269,9
Շինարար . նյութերի արտադր .	64,7	19,9
Մորթե—մուշտակաղործ	78,6	79,4
Հանքերի, կավի և քարի վե-		
րամշակություն	65,3	24,0
Կանեփի պարանի արտադր . . .	33,2	20,1
Կաշվեղործություն	50,6	101,6
Գորգաղործություն	47,0	5,4

Փոխադր.	միջոցների	արտադր.	29,1	18,4
Սանձա-թամբակործություն	.	.	25,3	37,6
Հրուշակարանի	արտադր.	.	19,7	39,0
Յերշիկի-ապուխտի	արտադր.	.	15,6	51,9

Մենք այստեղ տեսնում ենք, զլիսավորապես, արդյունաբերության այնպիսի ուրույն ճյուղեր, վորոնց պետարդյունաբերությունը և ընդհանրապես խոշոր արդյունաբերությունը չի ընդգրկում կամ աննշան չափով և ընդգրբ-կում:

Մանր արդյունաբերության արտադրանքի և նրա մեջ զբաղված անձանց թվի բարձր տստիճանը, տեսակաբար կշռի գերակշռությունը մի շարք ճյուղերի մեջ, մեզ ստիպում են առանձնակի ուշադիր մոտեցում ունենալ՝ վորոշելու մանր արդյունաբերության տենդենցիներն ու նրա զրաված տեղը ժողովրդական տնտեսության ամբողջ սիստեմի մեջ, վերլուծելու նրա սոցիալ-տնտեսական կազմը և այն ուղիները, վոր հետագայում պետք ե փոխարինե նրան խոշոր արտադրությունը:

II. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱԶՄՆ, ԸԱՏ ԼԵՆԻՆԻ ԿԼԱՍԻՖԻԿԱՑԻԱՅԻ (ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԻ)

Մանր արդյունաբերություն հասկացողությունը հավաքական գաղափար ե: Այս իմաստի տակ պետք ե հասկանալ այն բազմազան սոցիալ-տնտեսական խմբերը, վոր միացվել

և ի մի, սոսկ իրենց մեծության ձևական համականիշներով։ Սրանց թվին են պատկանում, և՛ մանր ղետաձեռնարկները, և՛ մանր կոռպերատիվ ձեռնարկները, և՛ մանրը, վարձու և անային բանվորներ ունեցող, մասնավոր կապիտալիստական ձեռնարկները և մանր։ անհատական (ընտանեական) ապրանք արտադրողների մասսային իրենց յենթարկող, գնորդմիջնորդները, և՛ չուկայի համար աշխատող, անհատական (ընտանեական) արդյունաբերական ապրանք արտադրողները, և՛ անմիջապես սպասողի պատվերով (արհեստավորներ) աշխատադ, անհատական (ընտանեական) արտադրողները։

Մանրը մասնավոր-կապիտալիստական ձեռնարկները ևս, բատ իրենց բնույթի, լինում են բազմազան։ Այսուեղ կան և՛ չուկայի համար աշխատադ ապրանքային տնտեսություններ, և՛ անմիջապես սպասողի համար նրա պատվերով աշխատադ տնտեսություններ, և՛ անմիջապես աշխատանք գործադրողներ, և՛ վոչ վարձով տնտեսություններ, բայց առավել նրան պատվերներ (բաշխիչ գրասենյակներ), և գնորդմիջնորդներ, վորոնք ըստ ելության հանդիսանում են միենույն արդյունաբերական ձեռնարկողներ։

Հաճախ մանր արդյունաբերության հասկացողությունը շփոթում են տնտեսագործական արդյունաբերության հետ։ Ճիշտ է արդյոք, թե՝ վոչ, բայց ակնհայտ է, վոր տնտե-

նագործական արդյունաբերություն հասկացողությունը նույնագան հավաքական է, վորքան և մանր արդյունաբերության գաղափարը:

Լենինը նրա մասին գրել է.

«Ի պատասխան այն հարցի, թե ի՞նչ է տնայնագործական արդյունաբերությունը, տվյալներն ստիպում են պատասխանել այսպես. վոր դա գիտական հետազոտության համար միանգամայն անպետք հասկացողություն է, վորի տակ սովորաբար մտնում են արդյունաբերության բոլոր և ամեն տեսակ ձևերը, ոկտած տնային զբաղմունքներից և վերջացնելով շատ խոշոր ֆարբիկաներում գործադրվող վարձու աշխատանքով» (Լենին աշխատությունների ժողովածություն III յեր. 368)

«Մենք անոգուտ ենք համարում վիճել» տնայնագործ խոսքի իմաստի մասին, վորովհետեւ... չկա արդյունաբերություն (բացառությամբ գուցե մեքենայնացված արդյունաբերության) մի այնպիսի ձև, վոր չմտնի այդ սովորական տերմինի մեջ և վոր միանգամայն անպետք է գիտական ուսումնասիրությունների համար» (տոմ II յերես 384):

Վերլուծելով Պերմի վիճակագրության տվյալները, Լենինը մատնանշում է. «Մենք տեսնում ենք, վոր այդ հասկացողության տակ մտցվել են (տնայնագործական արդյունաբերության Դ. Շ.) արդյունաբերության բազմազան ձևերը, մենք նույնիսկ իրավունք ու-

նենք ասելու, արդյունաբերության համարյա
այն բոլոր ձեւերը, վորոնք ծանոթ են գիտու-
թյանը։ Յեվ իրոք, այստեղ մտել են և պատ-
րիարքական արհեստավորները, վոր աշխատում
են սպառողի պատվերով և նրա նյութերով ու
ստանում են վարձատրություն յերբեմն բնա-
տուրքով, յերբեմն դրամով։ Այստեղ մտել են
նաև բոլորովին ուրիշ ձեւի արդյունաբերու-
թյան ներկայացուցիչներ՝ իրենց ընտանիքի
հետ աշխատող մանր ապրանք արտադրողները։
Այստեղ մտել են կապիտալիստական արհես-
տանոցների տերերը, վորոնք շահագործում են
վարձու բանվորներ, սրանց թիվն ամեն մի
ձեռնարկության մեջ մի քանի տասնյակի յե-
համանում։ Այստեղ մտել են ձեռնարկատեր-մա-
նուֆակտուրիստները... և կապիտալիստների
համար աշխատող տնային բանվորները։

...Մեր նարոգնիկական եկանոմիկայի
սիրեցյալ ձեն այն ե, վոր արդյունաբերության
ձեւերի այդ անսահման բազմապիսությունը
լցնում է մի խմբի մեջ, կոչելով այդ խումբը
«անայնապործական», «ժողովրդական» ար-
դյունաբերություն և—risum tenetis, amici!
այդ «անմտությունը» հակադրում է «Փար-
բիկա-գործարանային» արդյունաբերությանը
(նույն տեղ, յերես 447—448)։

Հետեւելով Պերմի վիճակագիրների նյու-
թերին, Լենինը, վերը հիշված հողվածի մեջ,
հիմք ձառապեցնելով նրանց տվյալների վերլու-

ծությունը, ամբողջ արդյունաբերության վեհաբերյալ ընդունում եւ հետեւյալ սկզբունքը.

«... Յե՛վ Փաբրիկային արդյունաբերությունը և՝ «տնայնագործների» առաջին յենթախումբը (ազատ վաճառքի համար աշխատողներ Դ. Շ.) պատկանում են ապրանքային արտադրությանը, վոր բացակայում եւ յերկրորդ յենթախմբից (պատվիրատուսպառողի համար աշխատողներ Դ. Շ.): Պետք եւ խիստ տարբերություն դնել տնայնագործների յերրորդ խմբի մեջ, վոր աշխատում են գնորդմիջնորդների (և Փաբրիկանտների) համար և հիմնովին տարբերվում են տնայնագործների առաջին յերկու խմբերից: Զի կարելի չցանկանալ, վոր այսպես կոչված՝ «տնայնագործական» արդյունաբերության ուսումնասիրողները խստիվ պահպանեյին այս բաժանումը և խոսակցական տերմինի տակ կամայական իմաստ դնելու փոխարեն, գործածեյին քաղաքական-տնտեսական ճիշտ տերմիններ» (նույն տեղ, յերես 384—385):

Լենինը մեծ ջանք եւ թափել նարողնիկների դեմ մղած պայքարում, վորոնք աշխատում եյին «տնայնագործական արտադրության ձեվը» հակադրել կապիտալիստականին և ապացուցել, վոր տնայնագործական արդյունաբերության մեջ «աշխատանքին են պատկանում արտադրության գործիքներն ու նյութերը, դրա հետ միասին նաև աշխատանքի ամբողջ արդյունքները»:

Պերմի վիճակադրության նյութերի վրա
Հիմնվելով՝ Լենինն ապացուցեց, վոր այդ չէ
համապատասխանում իրականության:

«Մենք այժմ միանգամայն վորոշակի կեր-
պով կարող ենք արձանագրել, վոր այդ կեղծ
է: Նույնիսկ յեթե տնայնագործների թվի մեջ
մտցնենք և՛ արհեստավորներին, այնուամե-
նայնիվ «տնայնագործների» մեծ մասը չի հա-
մապատասխանում այդ պայմաններին. չեն
համապատասխանում, նախ՝ վարձու բանվոր-
ները, իսկ նրանց թիվը կազմում է 25,3 տոկոս,
յերկրորդ՝ գնորդ-միջնորդի համար ընտանի-
քով աշխատողները, վորովհետեւ վոչ արտադը-
րության նյութերը և՛ վոչ ել աշխատանքի ար-
դյունքները նրանց չեն պատկանում, այլ նրանք
ուսանում են միայն գործարքային վարձատը-
րություն. այդպիսիները կազմում են 20,8 տո-
կոս, յերրորդ՝ առաջին և յերկրորդ խմբին
ողատկանող վարձու բանվորներ պահող ընտա-
նիքավորները, վորովհետեւ նրանց են պատկա-
նում նաև վոչ իրենց աշխատանքների ար-
դյունքները: Այդպիսիները, հավանաբար,
կազմում են մոտ 10 տոկոս... Ահա ձեզ ընդա-
մենք 25,3, 20,8, 10 տ. վոր հավասար ե 56,1
տոկոսի: «Տնայնագործներ», այսինքն՝ կիսից ա-
վելին այդ պայմաններին չի համապատասխա-
նում: Ուրիշ խոսքով՝ նույնիսկ տնտեսական
տեսակետից այնպիսի խուլ և հետամենաց նա-
հանգում, ինչպիսին հանդիսանում է Պերմինը,
արդեն այժմ գերակշռում ե «տնայնագործը»,

վոր կամ ինքն ե վարձվում, կամ ուրիշներին ե վարձում, կամ շահագործվում ե, կամ շահագործում» (նույն տեղ, յերես 389) :

«Փաստերը հաստատում են, վոր արտադրության վոչ մի հատուկ «տնայնագործական» ձև չկա (դա «տնայնագործ» տնտեսագետների հնարածն է) գոյություն չունի և վոր այդ մանր ապրանք արտադրողներից առաջ են զալիս խոշոր կապիտալիստական ձեռնարկներ» (նույն տեղ, յերես 398—399) :

Լենինն ապացուցել է, վոր տնայնագործական արդյունաբերության մեջ գոյություն ունեն կապիտալիստական փոխարարելություններ, կապիտալիստական ստորաբաժանումներ :

Յելնելով նրա ձեւերի (ապրանքային արնեառության—արհեստան աշխատանք) կապիտալիստական ստորաբաժանումից և յուրահատկությունից՝ Լենինը, Պերմի վիճակագրության հիման վրա, տալիս ե ընդհանուրապես ամբողջ արդյունաբերության մեջ զբաղված անձանց համար հետեւյալ կլասիֆիկացիան .
I. Կապիտալիստական ձեռվարքարներ գործադրողներ .

Ա. ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

I. Կապիտալիստական ձեռվարքարներ գործադրողներ .

1. «Փարբիկա-գործարանային» բանվորներ .

2. «Ճնայնագործների» վարձու բանվորներ.

3. Գնորդ-միջնորդների համար տանն աշխատողներ :

II Մանր ապրանք արտադրողներ . . .

(Նրանց . . . (մի մասը) պահում և վարձու բանվորներ) :

Բ. ԱՐՁԵԱՏ

Դյուզական (մասամբ քաղաքի) արհեստավորներ . . .

(Նրանց . . . մի մասը պահում և վարձու բանվորներ) նույն տեղ, յերես 449—450) :

Ըստ վորում Լենինն անում և հետեյալ նըկատողությանը. «Այս կլասիֆիկացիայի մեջ կան սխալներ. նրա մեջ բացակայում են Փարսիկանաներն ու գործարանատերերը, բայց կան տասնյակներով վարձու բանվորներ ունեցող տնայնագործներ, նրա մեջ պատճաժմամբ մըտել են մի քանի մանուֆակտորիստներ վորոնք չեն տառնձնացված և չեն մտել ուրիշները, վոր գուրս են մնացել իրը «գնորդ-միջնորդներ» . . . Բայց . . . արդյունաբերության ձեերի մասին այդ կլասիֆիկացիան կազմված և տնայնագործական վիճակագրության տվյալների հիման վրա և մատնանշված սխալներն այդ տեղեկություններից բոլիսպ սխալներ են և վոչ թե կլասիֆիկացիայի սխալներ։ Համեմայն դեպք, այդ կլասիֆիկացիան իրականության մասին ճիշտ պատ-

կեր և տալիս, պարզաբանելով արդյունաքերության մեջ զանազան մասնակցողների իրական հասարակաւութեանական փոխհարաբերությունները, հետևապես և՝ նրանց դրությունը և՛ շահերը—իսկ այդպիսի քացատրության մեջ է կայանում ամեն մի գիտական ունտեսական ուսումնասիրության քարար խնդիրը» (նույն տեղ, յերես 449—450) :

Հենինի կլասիֆիկացիան «խոսակցական տերմինների տակ կամացական խմաստ դնելու» փոխարեն ցույց է տալիս այն սոցիալ-տնտեսական խմբերը, վորոնք ընդհանրապես կարելի յե գտնել արդյունաբերության մեջ (կապիտալիստական) :

Յեթե ոգտվենք այդ կլասիֆիկացիայից, մի կողմը թողնելով Փաբրիկա-գործարանային բանվորներին և տնայնառողջների վարձու բանվորներին, այն ժամանակ մնում են յերեք ուրույն խմբեր, վոր առանձնահատուկ են նաև մեր ժամանակի համար. կապիտալիստական ձեվով բանվոր բանեցնողներ, ձեռնարկատիրոջ (տնային բանվորներ) համար աշխատողներ, մանր ապրանք արտադրողներ և արհեստավորներ :

Հասկանալի յե, վոր այդ կլասիֆիկացիան բղխում է արդյունաբերության յերեք հիմնական ձեւերի հիմնական սխեմայից. մտնը արտադրություն, մանուֆակտուրա և Փաբրիկա: Նա հնարավորություն է տալիս արդյու-

նարերության մեջ առանձնացնել յուրահատուկ սոցիալ-տնտեսական խմբերը:

Անհրաժեշտ է մեկ անգամ ընդմիշտ վերջ տալ այն շփոթությանը, վոր գոյություն ունի ինչպես տնտեսական գրականության մեջ, այնպես և առողյա կյանքում, «տնայնագործական արդյունաբերության» վերաբերյալ, յերբ «տնայնագործական արտադրություն», «տրնայնագործներ» են համարում ընդհանրապես բոլոր հասարակ և մեքենայնացումից զուրկ ճեռնարկությունները կամ ընդհանրապես մանր, մասնավոր ճեռնարկությունները:

Մի քանի տնտեսագետներ տնայնագործական արդյունաբերություն հասկացողությունը բնորոշում են այն կապով, վոր կա գյուղատրնտեսության հետ, թեև շատ տնայնագործներ բարբովին նրա հետ կապ չունեն կամ նա հանդիսանում է սժանդակ գրադմունք:

Տնայնագործական արդյունաբերությունն առանձնացրել են մի շարք հատուկ տնայնագործական բներ (Պավլովի մետաղագործ, արդյունաբերություն), վորոնք զբաղված են բացարձակապես այս կամ այն հատուկ իրերի արտադրությամբ:

Ենինը վերը հիշված հողվածի մեջ բավական վառ դույնով հերքում են նման ճեռներպումը՝ մատնանշելով տնայնագործական արդյունաբերության գյուղատնտեսության հետ ունեցած կապի մասին, իրը ընդհանուր յերեւյթի սովորական յենթադրությունների

և պնդումների անձշտությունը, կապի, վոր յերբեմն նույնիսկ համարում են Ռուսաստանի առանձնահատկությունը»: (Նույն տեղ, յերես 393):

Մանր և «տնայնագործական» արդյունարերության բոլոր տեսակի մութ ընորոշումների փոխարեն, բազմազան սոցիալ-տնտեսական խմբերը մեկ հասկացողությամբ ընդուրկելու անարդյունավետ վոչ գիտական փորձերի փոխարեն, անհրաժեշտ և արդյունաբերության մեջ զանազան սոցիալ-տնտեսական խմբերի համար ընդունել վորոշակի կլասիֆիկացիա, մոտենալով այդ հարցին՝ «արդյունաբերությանը զանազն մասնակցողների մեջ գոյություն ունեցող հասարակա-տնտեսական փոխարարերությունները» յերեան բերելու տեսակետից:

Վերը մեջ բերված՝ Լենինի կլասիֆիկացիան հնարավորություն և տալիս, ինչպես մենք տեսանք, կառուցել մի այդպիսի կլասիֆիկացիա և, տնայնագործական արդյունարերություն հասկացողության փոխարեն, արդյունաբերության մեջ առանձնացնել յուրահատուկ սոցիալ-տնտեսական խմբերը:

III. ՄԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՊՐԱՆՔ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐ, ԱՐՀԵՍԱՎՈՐ- ՆԵՐ ՅԵՎ ՏՆԱՑԻՆ ԲԱՆՎՈՐՆԵՐ

Քննելով և վերլուծելով Պերմի վիճակագրության տվյալները՝ Լենինը մատնանշում

ե, վոր անթույլատրելի յէ միացնել կապիտալիստական բնույթ կըող մանր ձեռնարկությունները մանր ապրանքային արտադրությունների հետ:

«Որինակ՝ 1 և 10 բանվորներ ունեցող ձեռնարկիններն իրենցից ներկայացնում են բոլորին տարրեր տնտեսական խմբեր. նրանց մի տեղ միացնելը և «միջիններ» դուրս բերելը կլիներ միանդամայն անհեթեթ ձեակերպում» (նույն տեղ, յերես 395):

Յերեան բերելով, վոր ձեռնարկությունների մի մասն ըստ վիճակագրության ունի 16,4-ական վարձու բանվոր, Լենինը գրում ե.

«Այդ արգեն Փարբիկանտներ են՝ կապիտալիստական ձեռնարկությունների տերեր... Այդպիսի ձեռնարկությունների տեխնիկական և տնտեսական դեմքը հիմնովին տարրերվում ե մենակների արհեստանոցներից և չի կարելի չզարմանալ, վոր Պերմի վիճակիրներն այնուամենայնիվ վորոշել են նրանց միացնել մի տեղ և ընդհանուր «միջիններ» դուրս բերել» (նույն տեղ, յերես 397):

Տարով «տնտեսագործների» յեկամուտների վերլուծումը, Լենինն առանձնացնում է այն մեծ յեկամուտ ունեցող հարուստ տնայնագործներին, վորոնց ձեռնարկների վրա ընկնում են մոտ 10-ական վարձու բանվորներ: Նա մատնանշում է, վոր դրանք արգեն մանր Փարբիկանտներ են՝ կապիտալիստական արհեստանոցների տերեր, վորոնց «տը-

նայնագործների» թվի մեջ մտցնելը, մենակտարդյունաբերողների, դյուզական արհեստավորների և նույնիսկ, ֆաբրիկանոների համար տանն աշխատողների (յերեմյան, նույնիսկ, այդ միևնույն հարուստ տնայնագործների համար) շարքում, միայն ցույց ե տալիս, ինչպես արդեն նկատված ե, թե վո՞րքան անորոշ և սուածզական ե «տնայնագործ» տերմինը (նույն տեղ, յերես 435):

Արիեստավորի հասկացողությունը վորոշ է. նա շուկայի համար չի աշխատում. նրա տնտեսությունը Լենինը չի համարում ապրանքային տնտեսություն, նա աշխատում է անմիջապես սպառողի համար: Այդ տեսակետից միանգամայն ճիշտ չե պրոֆ. Ռիբնիկովի բնորոշումը «Եկոնոմիչեսկի Արագրենիե»-ում (1927 թ. № 47) լույս ընծայած իր հոդվածում, վորտեղ արհեստավորի հասկացողությունը նսեմացված ե, յեզրակացություններն ու տնայնագործական արդյունաբերության հեռանկարները շփոթած՝ արհեստավորի բնորոշումը, իբր արտադրողի, վոր աշխատում է անմիջապես սպառողի և տեղական մոտակա շուկայի համար: Այդպիսի բնորոշումը խառնում է միատեղ ապրանքային և վոչ ապրանքային տնտեսությունը:

Արհեստի մասին Լենինը մտանանցում է. «Արհեստն—արդյունաբերության այնքան հետամնաց ձե ե, վոր նույնիսկ հայրենակցական նարողնիկների մեջ, վորոնք բաղմիցու

պնդել են, վոր հետամնացությունը Ռուսաստանի յիշանկությունն ե, չեր գտնվել թեկող մի մարդ, վոր վճռեր բացահայտ ե ուղղակի կերպով պաշտպանել նրան ու ցուցադրել, իրբ իրեն իդեալների «դրավակականը» (նույն տեղ, յերես 389) :

Անհրաժեշտ ե առանձնակի կանգ առնել կաղիտալիսական ձեռվ բանվորներ գործադրով խմբերի վրա, վորոնք աշխատում են տանը գնորդ-միջնորդների համար (տնային բանվորներ) : Այդ բանվորները Ռուսաստանում կազմում ելին և կազմում են մի խոշոր մասսա ինչպես մինչհեղափոխական շրջանում, այնպես և ներկա ժամանակ :

«Շատ զեպքերում, —գրում ե Լենինը — «կապիտալիզմի զարգացում»—ի մեջ, խոչոք ձեռնարկատիրոջ արտադրության չափերի տվյալները գեռես վոչ մի զարգափար չեն տալիս նրանց իրական նշանակության մասին մեր «ոնայնազործական արտադրությունների» մեջ, վորովհետեւ այդպիսի ձեռնարկատերերը տնօրինում են վոչ այնքան իրենց ձեռնարկությունների բանվորների աշխատանքը, վորքան տնային բանվորների մասսայի աշխատանքը և նույնիսկ (դը Փակտո) ինքնուրույն մանր տերերի աշխատանքը, վորոնց վերաբերմամբ նրանք հանդիսանում են գնորդ-միջնորդներ» (Հատոր III, յերես 358—359) :

Մթերա-գնման ձեերը չափազանց բազմազան են և ինքնատիպ, և առեւրական կա-

պիտալը նրա մեջ խճճվում է արդյունաբերականի հետ և ընդհակառակը:

«Արդյունաբերական կապիտալ ունեցող մանուֆակտուրայում, —գրում է Լենինը, — բազմազան ձեռվ խճճվում է առետրականը, և աշխատողի կախումը կապիտալիստից ստանում է բազմազան ձեռք ու նրբություններ՝ սկսած վարձու աշխատանքից ուրիշի արհեստանոցում, դառնալով աշխատանք իր տանը «տիրոջ» համար և վերջացնելով նյութերի գնման և իրերի վաճառահանման կտիումով» (նույն տեղ, յերես 354—355):

«... Առետրական և արդյունաբերական կապիտալի մեջ գոյություն ունեցող ամենասերտ և անքակտելի կապը — դա մանուֆակտուրայի ամենաբնութագրող հատկանիշներից մեկն է: Այստեղ «գնորդ-միջնորդը» խճճվում է մանուֆակտուրայի հետ» (նույն տեղ, յերես 358):

«... Նարոգնիկական եկոնոմիայի հիմնական սիսալը հենց այն ե, վոր մի կողմից՝ նա բացասում և նռեմացնում է խոշոր և մանր ձեռնարկությունների միջի կապը, մյուս կողմից՝ առետրական և արդյունաբերական կապիտալի կապը» (նույն տեղ, յերես 359):

Լենինը կատեգորիկ կերպով դեմ է արտահայտվում մթերա-դնման արդյունաբերական նշանակության բացասման և նրան զուտ առետրական հարաբերությունների շարքը դասելու մասին:

«Մեզ մոտ սովորություն կա, դրում ե
լենինը, զնորդ-միջնորդին պատկերացնել մի
ինչ վոր բան, վոր արտադրությունից դուրս ե
կանգնած, մի ինչ վոր բերովի, արդյունաբե-
րության համար միանգամայն խորթ և «մի-
այն փոխանակությունից կախում ունեցող
բան» (Հատ. II, յերես 436) :

«Գնորդ-միջնորդի համար աշխատելը—
դա արտադրության մի հատուկ ձև ե, ար-
տադրության մեջ տնտեսական փոխհարաբե-
րությունների հատուկ կազմակերպում... Ան-
միջապես միանալով վարձու բանվորներ ու-
նեցող կապիառալիստական արհեստանոցին,
հաճախ կազմելով միայն նրա շարունակու-
թյունը կամ բաժանմունքներից մեկը, զնորդ-
միջնորդի համար աշխատելը հանդիսանում է
ֆարբիկայի մասնիկը, հասկանալով վերջին
արտահայտությունը վոչ գիտական, այլ խո-
սկցական նշանակությամբ» (նույն տեղ, յե-
րես 446-447) :

«Կապիտալիզմի զարգացման» մեջ, Լե-
նինը մանրամասն հիմնավորում է այդ առա-
ջադրությունը, վառ գույներով նկարագրե-
լով, թե ի՞նչպես այդ ձեւի ժամանակ վոչըն-
չանում են առեւրական և արդյունաբերական
կապիտալի միջի սահմանները:

«Արտագրության նյութերի վաճառելը
մանր արդ յունաբերողին, կարող է կազմել ա-
ռեւրական կապիտալի և՝ ինքնուրույն գոր-
ծարք, վոր կարող է լինել միանգամայն իրե-

ըի մթերա-գնման գործարքի նման։ Յեթև
 մթերա-գնողն սկսում է վճարել «տնայնա-
 գործին պետք» յեկող հում նյութերով, այդ-
 նշանակում ե, վոր խոշոր քայլ և արված կա-
 պիտալիստական փոխարարերությունների
 զարգացման մեջ։ Կտրելով մանր արդյունա-
 բերողին պատրաստի իրերի շուկայից՝ գնորդ-
 միջնորդն այժմ կտրում է նրան նաև հում
 նյութերի շուկայից և դրանով վերջնականա-
 պես իրեն է յենթարկում տնայնագործին։ Այդ-
 ձեկոց միայն մի քայլ և մնում մինչև առևտրա-
 կան կապիտալի ամենաբարձր ձեր, յերբ գը-
 նորդ-միջնորդը նյութերը վորոշակի վարձա-
 տրությամբ իրեր պատրաստելու համար ուղ-
 ղակի բաշխում է «տնայնագործներին»։ Տնայ-
 նագործը դը ֆակտո դառնում է վարձու բան-
 վոր, վոր աշխատում է իր տանը՝ կապիտա-
 լիստի համար։ այստեղ գնորդ-միջնորդի ա-
 ռևտրական կապիտալը դառնում է արդյունա-
 բերական կապիտալ» (Հատ. III, յեր. 297)։

«Կարող են ասել, գրում է Լևինը, վեր-
 լուծելով Պերմի վիճակագրության տվյալնե-
 րը, վոր տնայնագործական արտադրություն-
 ների մեջ յեկամուտների կուտակումները չառ-
 չնչին են. 5,7 % ձեռնարկներն ունեն յեկամու-
 տի 26,5 տոկ., 29,8 տոկ. ձեռնարկներն ու-
 նեն 64,6 տոկ.։ Դրան մենք կսատասխաննենք,
 վոր նախ՝ այդպիսի կուտակումն ապացու-
 ցում է «տնայնագործների» և «միջին թվերի»
 մասին յեղած՝ չհիմնավորած դատողություն-

ների լիովին անպետքությանն ու վոչ գիտական մոռեցումն այդ հարցին, յերկրորդ՝ չի կարելի աչբախող անել և այն, վոր այդ արգյալների մեջ չեն մտել զնորդ-միջնորդները, վորի պատճառով յեկամուտների բաշխումը նկարագրված է վերին աստիճանին սխալ:

Մենք տեսանք, վոր 2346 ընտանիքներ և 5628 բանիքորներ աշխատում են զնորդ-միջնորդների համար, հետեապես՝ այստեղ գըլխումոր յեկամուտներն ստանում են զնորդ-միջնորդները: Նրանց ստանձնացնելի արդյունաբերողների թվից միանգամայն արհեստական է և վոչ մի բանով չարդարացրած ձեվակերպում:

Իրը ֆարբիկա-զործարանային արդյունաբերության մեջ փոխհարաբերությունների արտացոլում, ճիշտ չեր լինի ցույց չտալ ֆարբիկանանների յեկամուտների չափը, այնպես և «տնայնազործական» արդյունաբերության եկոնոմիկայի նկարագրությունը ճիշտ չե ստանց ցույց տալու զնորդ-միջնորդի յեկամուտները, վոր ստանում է միենույն արտադրությունից, որը զբաղված են և՛ տնայնազործներ, յեկամուտները, վոր կազմում են միենույն իրերի արժեքի մի մասը, վոր սկարաստում են տնայնազործները: Հետեապես՝ մենք իրավունք ունենք և պարտավոր ենք յեղակացնել, վոր տնայնազործական արդյունաբերության յեկամուտների իսկական բաշխումն անհամեմատ ավելի անհամաշափ է,

բան վերն ե ցույց տրված, վորովհետեւ նրա
մեջ բացակայում են ամենախոշոր արդյունա-
բերողների խմբերը» (Հատ. II, յերես 435):

Մենք տեսանք, վոր առանձնացնելով
մանր արդյունաբերական ապրանք արտա-
դրողներին և արհեստավորներին՝ Լենինը,
կլասիֆիկացիայի համապատասխան տեղե-
րում չակերտների մեջ մատնանշում ե, վոր
մանր արդյունաբերական ապրանք արտա-
դրողների և արհեստավորների մի մասը պա-
հում ե վարձու բանվորներ և, հետեւապես,
սոցիալապես նրանք միատարր չեն: Յեկա-
մուտների համաձայն, Լենինը նրանց բաժա-
նում ե չքավորների, միջակներից ցածրերի,
միջակների և ունեորների: Չքավորները և
միջակից ցածրներն ստիպված են վաճառելու
իրենց աշխատանքը, միջակները և ունեոր-
ներն արդեն գործազրում են ուրիշի վարձու
աշխատանք: Լենինը միջակ տնայնադործներ
համարում է մեկ բանվոր ունեցողներին, իսկ
ունեորներ՝ մոտ յերեք:

Բացի մեջ բերած արտադրության ձեե-
րից, կան նաև ուրիշ ձեեր—դա տնային (բը-
նական) և կողմնակի զբաղմունքներն են, վո-
րոնք հանդիսանում են արհեստի և մանր ար-
դյունաբերական ապրանքային արտադրու-
թյան պատմական նախադրյալները, բայց
անային արտադրությունները, վոր հնարավո-
րություն են տալիս զբաղվել տանը, սեփա-
կան կարիքների համար նյութեր վերամշակե-

լով, չեն ստեղծում հասարակա-ոնտեսական փոխհարաբերություններ և այդ պատճառով ել նրանք արտադրական ձեւի տեսակետից մեզ չեն կարող հետաքրքրել. Ժամանակավոր կողմնակի զբաղմունքներով պարագում են դրամուրադիս այն գյուղացիները, վորոնք դնում են քաղաք իրենց բանվորական ուժի վաճառելու համար:

Այդպիսով արդյունաբերության հիմնական ճյուղերին—մանուֆակտուրային և ֆաբրիկային—կարելի յե հակադրել միայն արհեստը, մտներ արդյունաբերական ապրանքային արտադրությունն ու անային բանվորները: Տնային բանվորներին, ավելի ձիշա, կարելի յե կցել կամ ֆաբրիկային կամ մանուֆակտուրային. (նայած, թե նրանք ում համար են աշխատում), բայց չի կարելի դրա հետ աչքաթող անել նրանց այն առանձնահատկությունները, վոր նրանց մոտեցնում և մաներ ապրանք արտադրողներին: Դա սեփական անտեսությունում կատարած աշխատանքն է: Այժմ կարելի յե ճշտել գյուղատընտեսության հետ ունեցած կապի և խոշոր արտադրության հարցը: Այժմս պարզ ե, վոր դա չի վճռում «անայնագործական» արդյունաբերություն հասկացողության հարցը:

IV. ՄԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ

Գլխավոր հիմնարկությունը, վոր տնայ-
նագործական արդյունաբերության մասին
ներկա ժամանակ հավաքում և տեղեկություն-
ներ և խմբավորում ե այն, հանդիսանում է
Միութենական կենտվիճվարը։ Իր հրապա-
րուկած աշխատությունների մեջ կենտվիճ-
վարը կրկնում է Պերմի վիճակագիրների այն
բոլոր սխալները, վոր դատապարտել եր լե-
նինը։

Հատուկ հետազոտության մեջ ի մի մի-
ացնելով վոչ ցենզային ֆաբրիկաները, գոր-
ծարանային և մանուֆակտորային ձեռնարկ-
ները մանր արդյունաբերության մյուս ճյու-
ղերի հետ «մանր և տնայնա-արհեստագործա-
կան արդյունաբերություն» ընդհանուր ան-
վան տակ, կենտվիճվարն ստորաբաժանում և
ոլետական, կոռոպերատիվ և վարձու բանվոր-
ներ ունեցող մասնավոր կուպիտայիստական
ձեռնարկների և առանձնացնում ե առանց
վարձու աշխատանքային հասարակ ապրան-
քային տնտեսությունը։ Բատ վորում կենտ-
վիճվարի կրասիֆիկացիան միանգամայն չի
դուգաղիպում կենինի կրասիֆիկացիային։

Բատ կենտվիճվարի տվյալների, 1925
թվին կարելի յե տեսնել հետեւյալը։ մանր
արդյունաբերության կազմի մեջ ընկնող պե-

տական արդյունաբերությունն ընդգրկում է բոլոր զբաղված անձանց միայն 1,3 տոկ. և նրա արտադրանքի 7,4 տոկոսը. կոռապերատիվ արդյունաբերության՝ զբաղված անձանց թվի 4,6 տոկ. և արտադրանքի 16,3 տոկոսը. մտանավոր կապիտալիստական արդյունաբերությունը (մացնելով նրանց մեջ վարձու բանվորներ ունեցող մանր արդյունաբերական ապրանքարտադրողներին) զբաղված անձանց թվի 9,9 տոկ. և արտադրանքի 23,8 տոկ. առանց վարձու աշխատանքի հասարակ ապրանքային տնտեսությունը՝ զբաղված անձանց թվի 84,2 և արտադրանքի 52,4 տոկ.:

Բացարձակ թվերով այդ կազմում ե.

Պետարդյունաբերության մեջ 1925 թվին զբաղված եր 30,6 հազար մարդ, տալով 277,1 միլիոն ռուբլու արտադրանք։ Կոռապերատիվ արդյունաբերության մեջ զբաղված եր 127,1 հազար մարդ, տալով 605,9 միլիոն ռուբլու արտադրանք։ Վարձու աշխատանք գործադրող մասնավոր արդյունաբերությունը համախմբել եր 270,8 հազար մարդ, տալով 886 միլիոն ռուբլու արտադրանք։

Վարձու աշխատանք չգործադրող հասարակ ապրանքային տնտեսությունը համախմբել եր 2285 հազար մարդ, տալով 1.948 միլիոն ռուբլու արտադրանք։

Հստ կենտվիճակարի տվյալների, 1926-27 թվին ամբողջ մանր արդյունաբերության կազմի մեջ ընկնող պետական արդյունաբե-

բությունն ընդգրկել եր զբաղված անձանց
թվի 1 տոկ. և արտադրանքի՝ 4,3 տոկ. կամ,
բացարձակ թվերով՝ 39,2 հազար զբաղված
անձ և 199,8 միլիոն ռուբլու արտադրանք.
կոոպերատիվ արդյունաբերությունն ընդ-
գրկել եր զբաղված անձանց թվի 4,6 տոկ. և
արտադրանքի՝ 13,2 տոկ. կամ, բացարձակ
թվերով՝ 184,6 հազար զբաղված անձ և
606,5 միլիոն ռուբլու արտադրանք. մասնա-
վոր արդյունաբերությունն ընդգրկել եր
(մանր ապրանքարտադրողների, վարձու-
րանվորների և մենակների հետ միասին) ըզ-
րաղված անձանց թվի 94,4 տոկ. և արտա-
դրանքի 82,5 տոկ. կամ, բացարձակ թվերով՝
3771 հազար զբաղված անձ և 3808 միլիոն
ռուբլու արտադրանք:

Կենտվիճակարի նյութերը հնարավորու-
թյուն չեն տալիս վորոշակի կերպով յերկան
բերելու մանր արդյունաբերության այն ա-
ռանձնահատուկ սոցիալ-տնտեսական խմբե-
րը, վոր առանձնացը ել և լենինը — մանր ար-
դյունաբերական ապրանքարտադրողներին,
արհեստավորներին և տնային բանվորներին:

Առաջին սխալը կենտվիճակն անում
և նրանում, վոր առանձնացը լուսավորությունները, ըստ ըզ-
րաղված անձանց և նրանց վարձու բանվոր-
ների թվի խմբավորելիս (1, 2, 3-5, 6-10,
11-15 և բարձր) նա չի առանձնացնում պե-
տական և կոոպերատիվ ձեռնարկություննե-
րը, այդ պատճառով ել մենք զրկված ենք

Հնարավորությունից լրիվ պատկեր ստանա-
րու մանր արդյունաբերական ապրանքարտա-
գրողների և մասնավոր կապիտալիստական
տնտեսությունների մասին, վորովհետեւ բո-
լոր յեզրակացություններն ու միջիններն ի-
բրենց մեջ պարփակում են և՛ պետական և՛
կոոպերատիվ և՛ մասնավոր կապիտալիստա-
կան ձեռնարկություններ և մանր արդյունա-
բերակա ապրանքարտագրողներ։

Յերկրորդ սխալը կենտվիճվարն անում, և
նրանում, վոր արդյունաբերական ապրանք-
արտագրողների խմբի փոխարեն մենք նրա
մոտ գտնում ենք միայն վարձու աշխատանք
չզործագրող մենակներին։ Այսպիսով կենտ-
վիճվարը չի առանձնացնում վարձու բանվոր-
ներ բանեցնող մանր արդյունաբերական ապ-
րանքարտագրողներին։ Նրանք միացվում են
մասնավոր-կապիտալիստական ձեռնարկու-
թյունների հետ։ Ըստ վորում, կենտվիճվարի
տվյալների համաձայն, մանր արդյունաբե-
րության 87 տոկ. կազմում են այնպիսի տըն-
տեսություններ, վոր ունեն մեկ կամ յերկու
զրադշան անձ և զրանց վարձու բանվորներն
ամբողջ զրադշան անձանց թվի համեմատու-
թյամբ կազմում են 1,3 տոկ. տնտեսություն-
ների այն խումբը, վոր ունի 5-ից ավելի ըզ-
զրադշան անձ, արդեն ունի 60 տոկ. վարձու
բանվոր. 10-ից ավելի զրադշան անձինք ու-
նեն 77 տոկ. վարձու բանվոր։ Այդ ցույց է
տալիս այն սոցիալ-տնտեսական և արտագրա-

կան տարբերությունները, վոր զոյտթյուն
ունեն մանր արդյունաբերության ներսում,
վորտեղ մի բևեռում, ըստ յերեսույթին, ու-
նենք մասնավոր կապիտալիստական ձեռնար-
կություններ, ուր գերակշռում ե վարձու աշ-
խտանքը, մյուսում՝ մանր արդյունաբերա-
կան ապրանքարտադրողները, ուր անհջան չա-
փով ե գործադրվում այն: 1927 թվականի
տվյալների մեջ չեն առանձնացվում անգամ
մենակները և բոլոր մասնավոր կապիտալիս-
տական ձեռնարկությունները, մանր ապ-
րանքարտադրողներն ու վարձու բանվորներ
ունեցող արհեստավորները և մենակները
մտնում են «մասնավոր արդյունաբերության»
ընդհանուր խմբի մեջ:

Եերբորդ սխալը կենտվիճվարն անում ե
նրանում, վոր չի առանձնացնում արհեստա-
վորներին և տնային բանվորներին: Ըստ վո-
րում, հենց նրա տվյալների համաձայն, ար-
տադրանքի մոտ 60 տոկ. շինված ե պատվի-
րողի նյութից, վոր կարող է լինել և՛ սպա-
ռող (արհեստավոր), և՛ ձեռնարկատեր (շա-
հադրծման տնային ձև). առանձին վեր-
ցրած՝ գյուղական վայրերում՝ այդ տնկուր
հասնում ե մինչև 80 տոկ.:

Այսպիսով կենտվիճվարն անում ե յերեք
կարեոր սխալ. չի առանձնացնում մասնավոր
կապիտալիստական ձեռնարկությունները,
չի առանձնացնում մանր արդյունաբերական

առաջանք արտադրողներին, չի առանձնացնում
տնային բանվորներին և արհեստավորներին:

Տնային բանվորների առանձնացման բա-
ցակայությունը պակասեցնում է մասնավոր
կապիտալիստական տնտեսությունների խ-
կական մեծությունները, վորոնք բնութա-
գրվում են վոչ այնքան ցույց տված վարձու
բանվորներով, վորքան հենց տնային բան-
վորներով։ Ինսունական թվականներին Պերմի
վիճակագիրներին նախատելով նման սխալի
համար՝ Լենինը, ինչպես մենք տեսանք, շատ
մանրամասն կերպով հիմնավորել ե տնային
ձեի կարեւոր նշանակությունը տնայնագոր-
ծական արդյունաբերության մեջ։ Ներկա ժա-
մանակ շահագործման տնային ձեւը վոչ թե
պակասել ե, այլ, ընդհակառակը՝ մի շարք
առանձնակի պատճառների շնորհիվ, ընդար-
ձակվել ե։

Հետազոտելով մասնավոր կապիտալի ձե-
վերը՝ ընկ. Բելկինն իր մասնավոր կապիտալի
մասին գրած աշխատությունում մեջ ե բե-
րում ընդարձակ նյութեր, զանազան ճյուղերի
նկատմամբ՝ մեր որերում արդյունաբերու-
թյան տնային ձեի շարգացման մասին, ընդ-
զձելով, վոր խորհրդային պայմաններում նա
ստացել ե առանձնակի զարգացում։

«Վերը հիշված յերեւոյթները (սոցիա-
լական ապահովագրություն, հարկեր, պրոֆ-
միություններ և այլն) մասնավոր կապիտալի
մեջ առաջ են բերել վորոչ հետամնացություն

(ռեակցիա), նա անցել և արտադրության նոր ձեերի, վորոնք խորհրդային պետության պայմաններում կարող կլինեն տպահովել բանվորական ույժի անվերստուգիչ ոգտառդումն և հարկային ու ապահովագրական պարտավորությունների խուսափումը:

Արտադրության այլպիսի ձեեր են հանդիսանում տանն աշխատելու սիստեմն ու կեղծ արտելները» («Մասնավոր կապիտալը ԽՍՀՄ-ում» Արդհըատարակ. 1927թ.):

Հենց այդ հանգամանքն ել առաջ բերեց ԽՍՀՄ ԺԿԽ վորոշումը.

«Արհեստագործական կոոպերացիայի կենտրոններին և Աշխատողկոմատի մաքմիններին հատուկ ուշադրություն դարձնել մասնավոր ձեռնարկատերերին, վորոնք հաճախ իրենց ձեռնարկությունը ծածկում են կեղծ արտելի անվան տակ, շահագործման գաղտնի ձեերի (տնային շահագործում, տնային վարկ և այլն) տեղի ունեցող առանձնակի դարձացման դեմ վճռական պայքար մղելու անհրաժեշտության վրա» (Դեկրետ տնայնա-արհեստագործական արդյունաբերության մասին, 3/VI 1927թ.):

Տնային բանվորների շարքը պետք է դասել և այն տնայնագործներին, վորոնք վոչ միայն աշխատում են ձեռնարկատիրոջ համար, բայց անհաման կարգով, նրանից ուղղակի աշխատանք ստանալով, այլև այն բանվորներին, վորոնք աշխատում են զանազան տե-

սակի միջնորդների համար։ Կենտվիճվարը
վոչ մի ուշողը թյուն չի դարձրել նաև այս
հարցին։

Անինն առանձնակի շատ ուշադրություն
և դարձրել այս ձեին և «Կապիտալիզմի Զար-
դացման» ու «Փերմի նահանգի 1894-95 թ.
անայնագործական վիճակագրության» մեջ
դատապարտում և նրանց, ովքեր գնորդ-ժիշ-
նորդին չեն դառնում արդյունաբերական կա-
պիտայի շարքը, համարելով նրա դործունե-
յությունը բացառապես փոխանակության բը-
նագավառ։ Եռայնիսկ ներկայումս այդ տեսա-
կեար հնացած չե։ Այսպես, «Նա աղքարնոմ
ֆրոնտե» ամսագրի 1927 թվի առաջին հա-
մարում, բնկ. Յիլկոյի հոդվածի մեջ մենք
կարգում ենք։

«Մասնավոր արդյունաբերական կապի-
տալը տնայնա-արիեստագործական արտա-
դրության մեջ մասնակցում է չնչին չափով,
բայց հասել և արդեն զգալի կուտակման՝
ձեռնարկությունների բարձր խմբերում և ա-
վելի կապիտալիստական արտադրություննե-
րում» (յեր. 66)։ Իսկ այժմս համառոտակի
կանգ առնենք, թե ի՞նչ չափով է առևտրական
մասնավոր կապիտալը (վորն իր կողմից ա-
ռանձնացված ե. Դ. Հ.) մասնակցություն
ունենում տնայնագործական արդյունաբերու-
թյան մեջ։ Պետք է նկատել, վոր մասնավորի
աշխատանքի այս ասպարեզը բոլորովին չի
ուսումնասիրված։ Գոյություն ունեն առան-

ձին նկարագրված տվյալներ, վորոնք այնու-
ամենայնիվ թույլ են տալիս յեզրակացնելու,
վոր տնայնա-արհեստագործական արդյունա-
բերության մեջ մասնավոր կապիտալի (առև-
տրական. Դ.Հ.) գործադրման ձևը հանդիսա-
նում է նյութերի մքերումն և իրերի վաճա-
ռահանումը (վոր իր կողմից առանձնացված ե
Դ.Հ.), ըստ վորում այդ մասնակցության
չափերը բնութագրվում են բավական զգալի
քվերով» (յեր. 72):

Գետք ե վորշակի կերպով գիտենալ, վոր,
ընդհակառակը, մասնավոր արդյունաբերա-
կան կապիտալը տնայնա-արհեստագործական
արտադրության մեջ մասնակցում և զգալի
չափերով, վորովհետեւ Ցիլկոյի ցուցմունքը
մասնավոր կապիտալի նյութերի մթերման,
տնայնագործական իրերի վաճառահանման
մեջ մասնակցելու խոշոր չափերի մասին,
հենց ընութագրում և արդյունաբերական
մասնավոր կապիտալի ընդարձակ մասնակ-
ցությունը:

Ընկ. Ցիլկոն սխմարմամբ մասնավոր կա-
պիտալի նյութերի մթերումն և տնայնագոր-
ծական իրերի վաճառահանումը վերագրում է
առևտրական կապիտալի բնագավառին:

Ներկա ժամանակի համար վառ պատկեր
և տալիս Ռւկրայնույի արհեստագործական
կոոպերացիայի հաշվետվության հազորդա-
գրությունը, վոր հետեւյալ ձեռվ և նկարա-
գրում մասնավոր կապիտալի Ռւկրայնույի

անոնց ազգության արդյունաբերության մեջ
մտնալցելու ձևերի մտածին։

«Տալով նյութը վարկով, մասնավորն իւ-
րեն հատուցում և պատրաստի արտադրանքի
ստացումով, ըստ վորում ինչպես պայմանա-
փորմած վարձարարությունը, այնպես և նրա
տուջաղբած պայմանները, պատրաստի իրեր
ստանալու դեպքում, հաճախ կրում և վաշխա-
ռու և գիշատիչ բնութիւն, հատկապես գյու-
ղական վոչ ունեոք տնայնազործների հետ
գործարքներ կնքելիս» («Աւելայնայի Ար-
հետ Վարկ. Միության» 1926-27 թ. գոր-
ծունեյությունը)։

Ներկա ժամանակի համար պարզ պատկեր
են տալիս նուե այն որինակները, վոր մեջ և
ըերում ընկ. Ստալինը, տնայնազործ-միլիո-
նատերերի մտածին XV կուսհամագումարում,
այն մտածին, թե «ընդհանրապես տնայնազոր-
ծական արդյունաբերության բնագավառում,
մտանավորապես կաշվեգործական և մանված-
քային արդյունաբերության ասպարիզում,
կան բավական թվով նոր միլիոնատերեր, վո-
րոնք ստրկացրել են տնայնազործներին և
բնդիանապես մասը արդյունաբերողներին»
(Ստալին—ՀԿԿ(բ)ԿԿ Հաշվետվությունը XV
Համագումարի համար, ԳԻԶ, 1928 թ)։

Չի կարելի համաձայնվել ընկ. Ցիլկոյի
հիշված հաղվածի հետ վոր, իրը, մանը ար-
դյունաբերության մեջ, վերին կապիտալիս-
տական խմբերը, ըստ կենտրոնակարի տվյալ-

ների համախմբում են մանր և տնայնա-ար-
հեստագործական արդյունաբերության մեջ
բոլոր զբաղած անձանց միայն 2,7 տոկոսը.
Նրանց վաստացի ծավալը և կապիտալի կենա-
րոնացումը նրանց մեջ պետք է հաշվել ավելի
բարձր, վորովհետեւ նրանք իրենց ազդեցու-
թյունը տարածում են տնայնագործների հոծ
բաղմության վրա՝ տնային բանվորների և
մթերման միջոցով:

Այդ պատճառով ել միանդամայն հասկա-
նալի յե գառնում XV կուսհամագումարի գի-
րեկափվը՝ տնայնագործներին վաշխառուա-
կան ձեռվ, բաշխիչ աշխատանքների գնման և
այլ շահագործման զաղտնի ձեւերի գեմ վճռա-
կան պայքարի անհրաժեշտության մասին
«մասնավոր գնորդ-միջնորդից, բաշխիչից և
վաշխառվից յետ գրավելու» անհրաժեշտու-
թյան մասին։ Այդպիսով, մենք տեսնում ենք,
վոր մանր արդյունաբերական ապրանք արտա-
դրողների, արհեստավորների և տնային բան-
վորների սոցիալ տնտեսական խումբը, վոր
Լենինն առանձնացրել եր արդյունաբերու-
թյունից, լիովին պահպանել ե իր նշանակու-
թյունը նաև ներկա ժամանակի համար։

Սոցիալ-տնտեսական բեկումները, վոր ա-
ռաջացրել ե Հոկտեմբերյան հեղափոխու-
թյունը, կապիտալիստական ֆարբիկայի փո-
խարեն առաջ բերին սոցիալիստական ֆարբի-
կան. կապիտալիստական ձեռնարկները մնա-
ցել են իրը բացառիկ յերեւոյթ փոքրաթիվ

կանցեսիոն և կապալով վերցրած մասնավոր
ֆարբիկաների ձեռվէ:

Կապիտալիստական մանուֆակտուրան ևս
իր գերակշռող մասով փոխարինված և սոցիա-
լիստական ձեռնարկներով։ Համեմատաբար
խոչը չափով մնացել են ավելի մանր (20
տարեկանութիւն պահառ ունեցող) կապիտալիստա-
կան ձեռնարկները։ Մանր արդյունաբերական
տոքրանքային արտադրությունն ու արհեստու-
ութափանել են իրենց բնույթն այն փոփոխու-
թյումը, վոր ստացել են զարգացման սոցիալ-
ակտիվական այլ տեսլանցներ, վորի մասին
կիսուննք մի քիչ հետո։

Մենք տեսանք, վոր Կենտվիճակարը ա-
ռանձնացնում ե վոչ միայն ցենզույին մանր
մասնավոր կապիտալիստական ձեռնարկները,
այլև վոչցենզույին մանր պետական և կոոպ-
ձեռնարկները։ Այդ պատճառով ել, բայ Կենտ-
վիճակի այլայների, պետք ե տարբերել
մանր պետական, կապիտալիստիկ և՝ մասնավոր
կապիտալիստական ձեռնարկները և՝ մանր ար-
դյունաբերական ապրանք արտադրողները, ար-
հետափորները և՝ տնային բանվորները։ Ինքն
բայ ինքյան հասկանալի յե, վոր բոլորի հա-
մար անվիճելի պետք ե համարել այն ճշմար-
տությունը, վոր չի կարելի խառնել մի տեղ ե
բնդ հանուր յեղբակացություններ անել պետա-
կան, կոոպերատիկ և՝ մասնավոր կապիտա-
լիստական ձեռնարկների և՝ մանր ապրանքա-
յին արտադրության և՝ արհեստի նկատմամբ,

վորովհետեւ այս բոլոր ձևերն իրենց սոցիալ-
տնտեսական բնույթով տարբերվում են իրա-
րից : Սոցիալ-տնտեսական տեսակետից մանր
պետարդյունաբերությունը պետք ե նայվի
ամբողջ պետարդյունաբերության հետ, վո-
րովհետեւ իր սոցիալ-տնտեսական բնույթով
նա վոչնչով չի տարբերվում ամբողջ պետար-
դյունաբերությունից . մանր կոռապերատիվ
արդյունաբերությունն այս տեսակետից պետք
ե նայվի ամբողջ կոռապերատիվ արդյունաբե-
րության հետ, ինչպես և մանր կապիտալիս-
տական արդյունաբերությունը՝ ամբողջ մաս-
նավոր կապիտալիստական արդյունաբերու-
թյան հետ . ուրույն և առանձնակի խումբ,
վոր յուրահատուկ ու հատկանշական և
միայն մանր արդյունաբերության համար,
հանդիսանում են արդյունաբերական առրանք
արտադրողները, արհեստավորական և տնա-
յին բանվորները : Այդ մեզ համար անհրաժեշտ
ե սահմանել, վորովհետեւ դա բնորոշում և
մեր վարած քաղաքականությունը՝ վերը ցույց
տված յուրաքանչյուր խմբի նկատմամբ :
Մանր պետական արդյունաբերության նկատ-
մամբ վարած քաղաքականությունը նույն մեր
քաղաքականությունն ե, վոր տարվում և սո-
ցիալիստական արդյունաբերության նկատ-
մամբ . կոռապերատիվ ձեռնարկների նկատ-
մամբ վարած քաղաքականությունը բնորոշ-
վում ե մեր ընդհանուր կոռապերատիվ քաղա-
քականությամբ : Մասնավոր կապիտալիստա-

կան ձեռնարկները մեզ մոտ բաղլակից են
մտանալիք կապիտալի ճակատագրին, և բա-
րենպատելու ձեռնարկումների առանձին ձե-
ստհմանված և մանր արդյունարերական ապ-
րանք արտադրողների նկատմամբ. դրա հա-
մար ել հենց այդ խումբն է, վոր պետք ե դառ-
նու հաստուկ և առանձին նայելու, ուսումնա-
սիրության և կանոնավորման առարկա:

Պետք և քննել նաև մանր արդյունարերա-
կան ապրանք արտադրողների և արհեստավոր-
ների մեջ դոյտթյուն ունեցող կապիտալիս-
տական տարրերի հարցը: Ինչպես մենք արդեն
հիշեցինք, Լենինն իր Պերմի վիճակագրու-
թյան մտախն զբած հողվածում մատնանշում
է, վոր անայնագործական արդյունարերու-
թյան մեջ չկա հովերգություն— անայնագոր-
ծը կամ վարձվում է կամ ուրիշին և վարձում
— կամ շահագործում է կամ շահագործվում:
Անկատակած է, վոր վարձու աշխատանքի գոր-
ծագրումը, այսինքն՝ ուրիշի աշխատանքի շա-
հագործումը, հավելյալ արժեքի յուրացումը
պարզ ապացույց ե այն բանի, վոր մանր ար-
դյունարերական ապրանք արտադրողների և
արհեստավորների շարքում գոյություն ունեն
կուլտակային կապիտալիստական տարրեր: Բա-
ցառություն կարող են կազմել մեկ բանվորից
վոչ ավել սժանդակ աշխատանք գործադրող-
ները, յեթե այդ բղխում է արտադրության
պայմաններից. դրանք մանր արդյունարերա-
կան ապրանք արտադրողների և արհեստավոր-

ների միջակ տարրերն են: Միենությն ժամանակ
 պետք ե նկատել, վոր վարձու բանվորների
 գոլ չ ո դ ո մ ո ւ . (մենակները, բատ կենովինվա-
 րի բնորոշման) ձևական հատկանիշի բացա-
 կայությունը միշտ շի ցույց տալիս չքավոր
 կամ միջակ տնաենության բնությը: Մանր
 արդ յունաօներության մեջ գոյություն ունեն
 բայ մ ո ւ . լ'զով ծածկված կապիտալիստական
 տնտեսություններ — մենակների տնտեսու-
 թյուններ, վորոնք չեն գործադրում վարձու
 բանվորներ, բայց ունեն արտադրական կապի-
 տալ (սարքավորություն ունեն շահագործելու շըր-
 չակա գյուղացիության, իրրե պատվիրա-
 տվի, աշխատանքը: Այդպիսի տնտեսություն-
 ների նմուշ հանդիսանում են ալյուրադաց և
 ձիթահան ձեռնարկները:

V. ՄԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍԵԶ ՅԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱ- Ն ՈՒՄ

Մեր յերկրի ինդուստրացման ուժեղ թա-
 փը ստիպում է արծարծել այն հարցը, թե
 արդյո՞ք մեզ մոտ հետագայում մանր արդյու-
 նաբերական արտադրությունը պետք է զար-
 գանա թե վոչ:

Այդ հարցը վճռելու համար պետք է քըն-
 նել մանր ապրանքային արտադրության և ար-

Հեստի զարդացման արմատների և դրդապատճառների հարցը:

Այն պատճառները և պայմանները, վորոնք առաջ են բերում մանր արդյունաբերական արտադրության զարդացումը, յերեան և հանել պրոֆ. Ռիբնիկովը վերը հիշված էր հոգվածում, վոր տպված և «Եկոնոմիչեսկի Արողքենիայում» (1927 № 4—7):

Տնայնագործական արդյունաբերության զարդացման պատճառները թուսաստանում. բանվորական ձեռքերի ավելացումը, տնտեսական ցածր մակարդակը, հաղորդակցության վատ ճանապարհները, բնակչության պահանջների հասարակ լինելը, կապիտալների պակասությունը: Պրոֆ. Ռիբնիկովը տալիս ե միանգամայն ճիշտ վերլուծում, հաստատելով այն մի շարք փաստերով, թե ինչպես աընայնագործական արդյունաբերությունը հետզհետեւ գուրս և մզվում յերկրից՝ բաղաքների խոշորացման և բազմացման, կապիտալների առատության և հաղորդակցության ճանապարհների զարդացման դեպքում:

Նա ցույց է տալիս, քնննելով մի շարք ճյուղերի զարդացման ընթացքը, թե ինչպես թուսաստանում կապիտալների պակասության, բանվորական ձեռքերի ավելացումի և նրա եժանության, պահանջի ցրվածության և հաղորդակցության ճանապարհների բացակայության շնորհիվ, տնայնագործական արդյունաբերությունը զարդացել և գերիշխել է

այն ճյուղերում, վորտեղ չի պահանջվել կուպիտալի բարձր որդանական կազմություն և հնարավոր ե յեղել ողտագործել տնայնագործին իր տանը:

Ծուսաստանում հատկապես մեծ ե յեղել մանր արդյունաբերության նշանակությունը նախապատերազմ յան շրջանում: Խոչոր արդյունաբերության մեջ զբաղված 16 անձի դիմաց մանր արդյունաբերության մեջ զբաղված յեն յեղել 30 անձ: Ծուսաստանում մանր արդյունաբերության վորոշակի յուրահատուկ ճյուղերի խմբում, արդյունաբերության մեջ զբաղված 100 անձի դիմաց, նախապատերազմ յան շրջանում դալիս են հետեւյալ թվերը.

Կաշվե կոչկակարություն :	98
Դերձակություն :	99
Փոխադրական միջոցների արտադր .	99
Հյուսնություն :	92
Փայտագործ-քանդակ .	97
Գվան-պարանագործ .	86
Հյուսվածքագործություն :	95
Թամբա-սանձագործ . և կաշվե իրերի արտադր .	87
Փականագործ-դարբնութ .	90
Կողովագործություն .	99
Ժանյակի ձեռագործություն .	96

Շատ հետաքրքիր ե, վոր արդյունաբերության այդ միևնույն ճյուղերում մանր ար-

դյունարերությունը նախապատերազմյան
շրջանում խոշոր դեր եր խաղում նաև արտա-
ստհմանում :

Մենք այստեղ մեջ կրերենք Գերմանիայի
և Ֆրանսիայի մանր և խոշոր արդյունաբե-
րության մեջ զբաղված անձանց հարաբերու-
թյանը վերաբերող պլոֆ. Ուիբնիկովի կող-
մից զանազան աղբյուրների հիման վրա կազ-
մած տախտակները.

Տարեթիվ	Մինչև 5 վարձու բան- վոր ունեցող ձեռնարկնե- րում	Տնտես- ական	Տոկո- ս	Երես ավելի վարձու բան- վոր ունեցող ձեռնարկնե- րում	Տոկո- ս
1882 . .	4,3	0,5	62	3,0	38
1895 . .	4,7	0,4	49	5,4	51
1907 . .	5,3	0,4	39	8,9	61

Մենք տեսնում ենք, վոր Գերմանիայում
մանր և տնայնագործական արդյունաբերու-
թյունը հետզհետե կորցնում է իր տեսակարար
կշիռը, բայց և այնպես 1907 թ. պահպանվում
է բավական զգալի չափով: Միևնույն ժամա-
նակ, բացարձակ թվերով նա չի կրճատվում,
այլ աճում է, այդ պատճառով ել չի կարելի
տսել, վոր նրան դուրս է մղում խոշոր արդյուն-
աբերությունը.

ԹՐԱՆՍԻԱՅՈՒՄ (ՄԻԼԻՈՆՆԵՐՈՎ)

<i>Տարե- թիվ</i>	<i>Մանր արդյունա- բերություն 1—10 ծառայող-բանվոր- ներ ունեցող ձեռ- նարկներում</i>	<i>Հա- զար</i>	<i>11-ից ավելի ծա- ռայող-բանվորներ ունեցող ձեռնարկ- ներում</i>	<i>Հա- զար</i>
1896 .	1,13	36	1,97	64
1906 .	1,18	33	2,56	68
	<i>Մինչև 5 ծառայող բանվոր ունեցող ունեցող (նրանց թվում հաշված մի- նակներին) ձեռնարկ.</i>		<i>6-ից ավելի ծառա- յող-բանվորներ ունեցող ձեռնարկ- ներում</i>	
1906 .	2,5	48	2,7	52

Թրանսիայում ինդուստրացման պրոցեսն յետ և մնում Գերմանիայից և այնտեղ մանր արդյունաբերության տեսակարար կշիռը բավական զգալի յի ու բնակչության աճումից սուած և անցնում. բացարձակ թվերով նա ևս աճում է:

Ընդհանրապես պատերազմի նախորդ աս-
բիներում Գերմանիայում և Թրանսիայում 1000 մարդ-բնակչին խոշոր և մանր արդյու-
նաբերության մեջ ընկնում եր.

	<i>Խոշորում</i>	<i>մանրում</i>
Գերմանիայում . . .	136	94
Թրանսիայում . . .	97	66

Տնտեսակործական արդյունաբերության մեջ զբաղված անձանց ընդհանուր թվերն այնքան հատկանշական չեն, վորքան ըստ առան-

ձին ճյուղերի ավյալները, վորոնք մենք ոգտազործում ենք պրոֆ. Ռիբնիկովի միենույն հոդվածից.

	Ցըմանիա (1906 թ.)	Ցըմանիա (1907 թ.)
Կոչվե կոչկակարություն	61	76
Դերձակություն	61-77	77
Փախաղբական միջոցների ար-		
առաջընթյուն	58	42
Հյուսնություն	58	47
Քայլա-քանդակ	34	33-34
Չվան-պարանազործ	22	46
Հյուսվածքազործություն 30	41 արիկ	67 գործ .
Թամր. սանձազործ և կաշվե		
իրեր	58	72
Ոմանեղեն-թիթեղազործ	44	16
Փականազործ-զարդնութ	40	39-32-11
Կողավագործություն	54	80
Հաշիս-ձեռագործություն	59	50

Զնայած նրան, վոր արտասահմանում ինդուստրացամբ բարձր աստիճանի վրա յեկանդնած, այնուամենայնիվ մանր արդյունաբերությունն ունի զգալի տեսակարար կշիռ, անգամ զարգացած ինդուստրիալ յերկրներում, կայունություն պահպանելով արդյունաբերության վորոշակի առանձնահատուկ ճյուղերի խմբում:

Ըստ 1925 թվականի վիճակագրության, Գերմանիայում կան 751,1 հազար մենակներ, իսկ մինչեւ 5 զբաղված անձ ունեցող (այդ թվում հաշված և մենակներին) ձեռնարկնե-

ըում համախմբված են 2,8 միլիոն մարդ կամ
 Գերմանիայի արդյունաբերության բանվոր-
 ների ընդհանուր թվի 22,4 տոկոսը և այն ել
 գլխավորապես վերը հիշված ճյուղերի մեջ։
 Մետաղագործական արդյունաբերության մեջ
 260 հազար (այդ տեսակ արտադրության 30,1
 տոկ.)։ Կաշվեգործական և լինուելեռումի ար-
 տաղբության մեջ 55,4 հազար, փայտագոր-
 ծական և քանդակագործականի՝ 342 հազար
 (35,7 տոկոս)։ սննդի և համի՝ 601 հազար—
 44,1 տոկոս (նրա թվում 393 հազար մենակ-
 ներ)։ յերաժշտական գործիքների՝ 29 հազար
 (24,5 տոկոս), շինարարական նյութերի՝
 343,5 հազար (22,4 տոկոս)։ մանվածքագոր-
 ծականի՝ 139 հազար (11,5 տոկոս)։ Այսպի-
 սով մանր արդյունաբերության մեջ գրադված
 անձանց ընդհանուր թվի 75 տոկոս կազմում
 են 4 ճյուղերը։ Հագուստեղենի և արդ ու զար-
 դի, սննդի և համի, փայտագործական և շի-
 նարարական։ (տես «Տնայնագործական ար-
 դյունաբերությունն և արհեստագործական
 կոոպերացիան» նյութերի ժողովածուն,
 ՌՍՖՀ գերժողանտիսորհի և Վաեկոպըոմ-
 այուղի հրատարակություն, Մոսկվա, 1927
 թ.)։

VI. ՄԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱ ՀԵՌԱ- ԾԿԱՐՆԵՐԸ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ

Փոխավորություն են արդյոք այն պայմանները,

վոր Ռուսաստանում խթան են տալիս մանր
արդյունաբերության զարգացմանը:

Մենք աղքատ ենք կապիտալներով, մեղ
մոռ բանվորական ուժի ավելացում կա, դեռ
ևս հաղորդակցության ճանապարհները թույլ
են զարգացած եւ զրա հետեւանքով պահանջը
ցրված ե, այդ բանին ներկայումս միանում ե
արդյունաբերական ապրանքային սովոր:

Այդ պատճառով ել միանգամայն հասկա-
ռայի յեւ դառնում XIV կուսկոնֆերենցիայի
ԽՍՀՄ ժկի և XV կուսհամագումարի վորո-
շումները տեսայնապորձական արդյունաբերու-
թյան մասին:

«Տնայնապորձական արդյունաբերությունն
ու կողմնակի զբաղմունքները ԽՍՀՄ-ի ընդ-
հանուր եկանոմիկայի մեջ ունեն կարևոր նը-
շանակություն: Տնայնապորձական արդյու-
նաբերության և կողմնակի զբաղմունքների
զարգացումը, վոր սպասարկում ե գյուղական
և քաղաքի շուկաները, մեկ կողմից սժանդա-
կում և պետական խոշոր արդյունաբերությա-
նը, կիսաֆարբիկատներ արտադրելու և վե-
րամշակելու միջոցով, մյուսից՝ գյուղի ավել-
ցուկ բանվորական ուժի ոգտագործման մի-
ջոց և հանդիսանում, իսկ մի քանի շրջաննե-
րում ել գյուղացիության յեկամուտների գըլ-
խավոր աղբյուրն ե այն: Այդ պատճառով ել
կուսակցության և պետության ուշադրու-
թյունն ավելի քան մինչեւ այժմս պետք ե
ողղված լինի տնայնապորձական արդյունա-

բերության և տնայնագործների ու արհեստագործների կողմանը վրա» (XIV կուսկօն-ֆերենցիա) :

«Ֆաբրիկա-գործարանային արդյունաբերությունը դեռ յերկար ժամանակ իր արտադրանքով չի կարող բավարարել ապրանքների բոլոր պահանջը, նաև կլանել ավելցուկ բանվորական ուժը»:

«Տնայնա-արհեստագործական արդյունաբերությունն ողտագործում և գլխավորապես գյուղի չքավոր և միջակ շերտերի բանվորական ավելցուկ ուժը և բավական չափով բավարարում և գյուղի և քաղաքի սպառողական պահանջը: Դրանով ել բնորոշվում և նրա խոռոշոր նշանակությունը ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության մեջ» (ԽՍՀՄ-ի ԺԿԽ վորոշումը 3 մայիսի 27 թվի):

«Հնգամյա ծրագիրը կազմելիս անհրաժեշտ ե աչքի առաջ ունենալ մանր տեղական արդյունաբերության՝ տնայնագործականի և արհեստագործականի զարգացումը, վորը ներկա ժամանակ հանդիսանում ե խոշոր արդյունաբերության լրացուցիչ մասը, ոժանդակում ե ապրանքային դեֆիցիտի վերացմանը և գործազրկության մեղմացմանը» (XV կուսհամադումար):

Ակնհայտ ե, վոր տնայնագործական և արհեստագործական արդյունաբերությունը դեռ ևս յերկար ժամանակ մեզ մոտ գերակըշող դեր է խաղալու այնպիսի ճյուղերում,

ինչպիսին են՝ գործազործությունը, ժանյակի ձևագործությունը, յերաժշտական գործիքների, խաղալիքների արտադրությունը, գերձակությունը, թաղիքն կոչկակարությունը, մորթեմուշտակագործությունը, թամբառանձագործությունը, փայտագործությունը, փոխագրական միջոցների արտադրությունը, անիվագործությունը, հյուսնությունը, կահկարտափիների արտադրությունը, կողովագործությունը, չփան-պարանագործությունը, փականագործ-գարբնությունը, թիթեղյա և յերկաթյա ամանեղինի արտադրությունը, յեղջյուրյա իրերի և խողանակների արտադրությունը և այլն։ Յեթե արտասահմանում այդ ճյուղերն ինդուստրացման պրոցեսի կողքին կարողանում են գոյություն ունենալ և մինչեւ ներկա ժամանակ պահպանվել, հետեւյալները այնպես շուտ չեն վոչնչանալ։

Հաստ Միութենական Պետալլանի հնդամյակի, վորը չաղկապում է պետական և տնայնագործական արդյունաբերերության զարգացումը, հնդամյակի վերջում նախատեսվում է, 1927—28 թվի համեմատությամբ, տնայնագործների և արհեստավորների թվի աճում մինչև 2 միլիոն մարդ և արտադրանքի՝ 3,5 միլիոն սուբլի։ Այդ հնդամյա ծրագրով արհայնա-արհեստավործական արդյունաբերությունը արհեստագործական կոոպերացիայի հետ հնդամյակի վերջում կունենա մինչև 6,3

Միլիոն զբաղված անձ և 8,8 միլիարդ ռուբլու արտադրանք և գլխավորապես զարդանալու յեւ հետեւյալ ճյուղերում։

ՀՅՈՒՂԻ ԱՆՈՒՆԸ	ԶԲԱԳԼՎԱԾ աՆՁԱՆՑ ԹԻՎԸ (հազար)		ԸՆԴՀԱՆՈՒՐ աՐՏԱ- ԳԵԱՆՐԸ (միլիոն -)	
	1928/29թ.	1932/33թ.	1928/29թ.	1932/33թ.
Շինար. նյութերի արտ.	673,4	1250,0	216,7	960,2
Փայտագործություն .	110,3	350,0	41,0	212,3
Ալյուրագագի արդյուն.	295,0	227,3	1505,0	1340,0
Հացթուխներ	93,4	130,0	296,6	716,6
Մետաղագործություն .	409,0	615,7	282,7	678,6
Հյուսվածքագործ	124,4	200,6	76,1	189,4
Կանեփ-պարանագործ .	28,4	41,3	24,0	43,0
Թաղիք կոշկակարութ .	206,8	256,1	97,9	183,6
Դերձակություն	594,2	700,0	492,1	896,0
Գեղարվեստ արտադր .	179,6	260,0	49,2	94,9
Հանք. կազի և քարի վերամ.	67,3	89,7	46,8	66,2
Հրուշակարանի արտ .	21,3	50,0	69,0	260,0
Ցերպիկ-ապուխտի . .	16,2	20,3	71,9	228,6
Գորգագործություն . .	59,8	104,2	7,2	42,9
Կաշվե կոշկակարութ .	653,2	719,3	641,3	832,0
Մորթե-մուշտակագործ .	75,9	198,6	79,3	120,5
Թամբաւ-սանձնագործ .	25,8	31,5	41,5	81,8
Փոխադր. միջոց. ար- տադր	21,8	46,6	25,6	65,7

Յանորություն. Թվերը վերցրած են ժողովնու-
խորհի հիմամյա ծրագրից։

Յերկրի ինդուստրացման զարգացումը, ինչպես մենք տեսանք նախապատերազմյան և ներկա ժամանակի տվյալների համեմատությունից, բայց ականակարգ է մանր արդյունաբերության տեսակաբար կշիռը մի քանի ճյուղերի մեջ (կաշվի կոչկակաբական արդյունաբերության, դերձակության, անտառաբիմի ականա արդյունաբերության և այլն)։ Այդ ճյուղերում, ուր նախապատերազմյան շրջանում բոլորսին չկար խոշոր արդյունաբերություն, պատերազմից հետո յերեան և զայխո խոշոր արդյունաբերություն, վորն առանձնակի զարգացում և ստացել յետ հեղափոխական շրջանում պետական արդյունաբերություն մեջ։ Բացի այդ, արհեստագործական կոսպերացիան նրանց մեջ կազմակերպում և կոյեկտիվ արտադրություն։ Այնուամենայնիվ, դեռևս մնում են մեծ չափով մենակներ, դրա թվում նաև հենց իրեն արհեստագործական կոսպերացիայում։

Ռուսաստանում մանր արդյունաբերության զարգացմանը խթան տվյալ պայմանները գոյություն կունենան յերկար ժամանակ և այդ պատճառով ել մանր արտադրությունը զերև բավական ժամանակ պետք և խաղավորութեր։ Բնակչության նոսրության, հաղորդակցության վատ ճանապարհների և պահանջի ցրվածության հետեւանքով— զեռ յերկար ժամանակ կզգացվի անայնագործի և արհեստավորի սպասարկման կարիքը։ Վորոշ

մասով յերկար ժամանակ քաղաքում և զյուղում գոյություն կունենա այն արիետավորք, վոր աշխատում ե պատվերով տնմիջապես սպառողի համար և հատկապես զբաղված ե զանազան վերանորոգումներով:

VII. ՄԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՇԵՆՑՆԵՐԸ

Հոկտեմբերյան հեղափոխությունը հիմնական փոփոխություններ մայրեց մանր արդյունաբերական ապրանք արտադրողի հեռանկարների մեջ: Բաշխիչներ և գնորդ-միջնորդին վորոշ չափով փոխարինել են կոոպերացիան և ոլետմարմինները: Ֆաբրիկանա Զավյալովին Պավլովս գյուղում փոխարինել և Պավլովս Մուրմանսկի մետաղագործական տրեստը, Տուրտ քաղաքում՝ Տուրպրոմտորդը, Նիմնինովգորոդում թաղիքե կոշկակարական արդյունաբերությունում՝ Նիմվալտրեստը և այլն: Առանձնակի կարևոր Փակտոր, վորստեղծել և Հոկտեմբերյան հեղափոխությունը, հանդիսանում ե անայնա-արհեստագործական կոոպերացիան, վորը մանր արդյունաբերական ապրանք արտադրողին ազատում և բաշխիչի և գնորդ-միջնորդի ձեռքից, ինքնազործունեցության հիմունքներով նրանց համախմբում և միասեղ նյութեր մատակարարելու և անայնազործական իրեր վաճառահանման ընկերու-

թյուն) և փոխողաբձ վարկավորման միջոցով (արհեստագործական վարկային ընկերություն), իսկ բազմք աստիճանի ժամանակ նաև միասնական բնդհանուր արտադրություն կազմակերպելու համար (բնդհանուր արհեստանոցներ) :

Վերջին տարիներն արհեստագործական կոոպերացիան բոլոր հանրապետություններում զարգանում և արագ թափով .

ՏՆԱՅՆԱԳՈՐԾՆԵՐԻ ԿՈՈՊԵՐԱՑՄԱՆ ԸՆՔԱՑՔՆ ԸՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՀԱԶԱՐՆԵՐՈՎ)

	հԱՇՄ	հԱՖԱՇ	մԽԱԲՇ	ԲՄԱՇ	ՄԻՋԱԲՇ	ՏԱԲՇ	ԱԶՄԱՆ	ՎՐԱՄԱՆԻ ՀԱՄԱՄԱՆ
1924թ.	123,3	123,3	—	—	—	—	—	—
1925 *	211,1	202,4	—	—	8,7	—	—	—
1926 *	338,2	245,0	62,4	15,1	13,1	1,0	—	1,40,2
1927 *	606,6	421,5	126,5	25,8	16,3	7,8	4,8	3,20,7
1928 *	866,4	562,8	24,2	38,0	21,5	19,7	19,1	7,62,5

Կոոպերացված անայնագործների թիվն ըստ արհեստագործական կոոպերացիայի տեսակների ամբողջ ԽՍՀՄ-ի մեջ բաշխվում է հետեւյալ ձեռով .

Արհեստագործական-վարկ բնկերություններ 245,3
Մատակարարող-վաճառահանման ընկերությ. 349,8
Բնդհանուր արհեստանոցներ 231,5

Աշխատանքային	արտելներ	29,8
հետու	տեսակներ	10,0
Ընդամենը		866,4

Աժբողջ սոցիալիստական սեկտորը զետես ընդգրկել ե մանր արդյունաբերության արտադրաքի վոչ ավելի քան 40 տոկոսը, իսկ տնայնա-արհեստագործական կոոպերացիան ընդգրկել ե բոլոր տնայնագործների և արհեստավորների մոտ 20 տոկոսը։ Բայց հոկտեմբերյան հեղափոխությունը հիմնական փոփոխություն մտցրեց մանր արդյունաբերական ապրանք արտադրողի հեռանկարների մեջ։ Յեթե մինչ հեղափոխական շրջանում կապիտալիստական սիստեմի պայմաններում նա ուներ միայն յերկու ուղի—կամ պետք է դառնար կապիտալիստ կամ ճորտագրվեր կապիտալիստին, միջնորդ-գնորդին և բաշխիչին։ Իսկ պրոլետարիատի դիկտատորայի ժամանակ նա ունի ուրիշ հիմնական ուղի—արհենայնա-արհեստագործական կոոպերացիայի միջոցով չքավոր-միջակ մասսային ներգրավել սոցիալիստական տնտեսության ամբողջ սիստեմի մեջ։

Թեև ներկա պայմաններում մանր արդյունաբերությունը հանդիսանում է միանգամայն անհրաժեշտ, բայց, ի հարկե, վորոշ ժամանակի ընթացքում իր բոնած դիրքի մեծ մասը զիջելու յե խոշոր արդյունաբերությանը։ Հարցն այս տարրական պնդումի մեջ չե, այլ հարցը նրան խոշոր արդյունաբերությամբ

փոխարինելու յեղանակների և ձևերի մեջ ե:
Հարցը նրանումն է, թե արդյո՞ք նա պետք է
փոխարինվի խոշոր արդյունաբերությամբ
այնպիսի հիմքանգոտ յեղանակնել, ինչպիսին
կապիտալիստական յերկրներում— խոշոր
արդյունաբերության և մանրի կոնկու-
րենցիայի և անայնագործ-արդյունաբերական
մասամերին քայլայելու միջոցով:

Այդ հարցին պատասխան և տալիս կու-
ռակցության ծրագիրը.

«Տնայնագործական և արհեստագործա-
կան արդյունաբերության նկատմամբ անհրա-
ժեշտ և լայն կերպով սկսագործել նրան, խը-
րախուսել անայնագործական միություններին
անտեսական արտադրությաններ տալու միջո-
ցով, վորն ուրիշ ձեռնարկումների շարքում
սղզված պետք և լինի, այն կողմքը, վոր կարու-
գանան կառեցնել անայնագործների մանր ար-
դյունաբերողներ դառնալու ձգտումներն և
այդ հետամնաց ձեերի համար ստեղծել անհի-
մանգուս փոխանցում գեղի ավելի բարձր՝ մե-
քնայնացված ինքուստրիան»:

Այդպիսով, այն ժամանակ, յերբ կապի-
տալիստական հասարակակարգում անայնա-
նագործի դարս վանումը խոշոր արդյունաբե-
րության կողմից առաջացնում և վերին տառի-
ճանի հիմքանգոտ յերեւյթ և նրան տանում և
վերջնական քայլայման ու չքավորության,
մեզ մոտ պետք է հարց դրվի անայնագործին
և արհեստագորին անայնագործական միու-

թյունների միջոցով ազահովել «անհիվանդում ձեռվ» փոխանցվելու դեպի «ավելի բարձր մեքենայնացված ինդուստրիա»:

Հետեւապես, յեթե կապիտալիտուական հասարակակարգում տնայնագործն ունի կամ կապիտալիստական ուղի, այդ նրանցից քչերին և հաջողվում, անցնելու կապիտալիստների շարքը կամ վերջնական քայլայում և աղքատացում չնորհիվ այն բանի, վոր խոչոր կապիտալը նրան գուրս և վանում, այդ ժամանակ պրոլետարիատի դիկտատուրայի որոք տնայնագործն արհեստագործուական կոռպերացիայի միջոցով դեպի խոչոր սոցիալիստական արտագրությունը, «ավելի բարձր մեքենայնացված ինդուստրիան» առանց բարդությունների փոխանցման մի ուղի ևս ունի:

Արտագրական արտելների և արգյունաբերական աշխատանքի կոռպերացման հարցը մեզ մոտ բոլորովին այլ կերպ և գրիված, քան կապիտալիստական յերկրներում։ Սրտի ցավոք պետք է արձանագրել, վոր մինչեւ այժմովոչ բոլորն են իրենց հաշիվ տալիս ուտոպիական (ցնորքային) կոռպերատիվային սոցիսլիզմը խորհրդային կոռպերացիայից տարբերելու անհրաժեշտության մասին։

«Ինչումն և կայանում կոռպերատորների, սկսած Ռոբերտ Ռուենից, ցնորքային ծրագրերը, ասում են Լենինը՝— Նրանում, վոր նրանք յերազում ենին ներկա հասարակությունը խաղաղ ճանապարհով փոխարինել սոցիա-

լիզմով, առանց հաշվի առնելու այնպիսի հիմ-
նական հարց, ինչպիսին և դասակարգային
կոխվը, բանվոր դասակարգի կողմից քաղա-
քական իշխանությունը գրավելը, շահազոր-
ծող դասակարգի զերիշխանության տարա-
լումը։ Յեվ դրա համար ել մենք իրավունք
ունենք այդ «կոռոպերատիվային» սոցիալիզմի
մեջ տեսնել ամբողջապես յերեակայություն,
ուժանուիկականի նման մի բան։ նաւյնիսկ
սոորություն և յերեակայել, թե բնակչության
հասարակ կոռոպերացման միջոցով կարելի յէ
դասակարգային թշնամիներին դարձնել դա-
սակարգային աշխատակիցներ և դասակար-
գային կոխվը՝ դասակարգային խաղաղություն
(այսպես կոչված քաղաքական խաղաղու-
թյուն)։

Անկասկած և, վոր հիմնական խնդիր
այժմեյության առակետից, մենք կլինեյինք
արդարացի, վորովհետեւ առանց դասակարգա-
յին կովի՝ քաղաքացիական իշխանության հա-
մար՝ պետությունում չի կարելի սոցիալիզմ
իրականացնել։

Բայց առաքք, թե այժմս բանն ի՞նչպես
փոխվեց, յերբ պետական իշխանությունն ար-
դեն գտնվում է բանվոր դասակարգի ձեռքում,
բանի վոր շահագործողների քաղաքական իշ-
խանությունը տապալված և և արտադրու-
թյան բոլոր միջոցները (բացառությամբ
նրանց, վորոնք բանվորական պետությունը
կամագոր կերպով ժամանակավորապես կոն-

ցեսիայով տալիս և նաև շահագործողներին) դժոնվում են բանվոր դասակարգի ձեռքին:

Այժմս մենք իրավունք ունենք տաելու, վոր կոոպերացիայի հասարակ աճումը մեզ համար համազոր և, հաշված վերը հիշված «փոքրիկ» բացառությունը, սոցիալիզմի աճմանը, և դրա հետ միասին մենք ստիպված ենք խոստովանվելու, վոր սոցիալիզմի մասին մեր ամբողջ տեսակը հիմնովին փոխվել ե» (տոմ XVIII, 2 մաս, «կոոպերացիայի» մասին հոդվածը)

Լենինը տալիս է միանգամայն ճիշտ պատասխան այն հարցին, թե ինչպես վարվել արտադրական արտելների, կոոպերատիվային արդյունաբերական ձեռնարկությունների հետ:

«Անկասկած և, վոր կապիտալիստական պետության իրավակարգում կոոպերացիան հանդիսանում է կապիտալիստական ձեռնարկություն: Անկասկած և, նուև այն, վոր մեր ներկա տնտեսական իրականության պայմաններում, յերբ միացնում ենք մտանավոր կապիտալիստական ձեռնարկները, բայց վոչ այլ կերպ, քան հասարակական հողի վրա, և վոչ այլ կերպ, քան բանվոր դասակարգին ողատկանող պետական իշխանության անմիջական հսկողության տակ (և արտադրության միջոցներն են պատկանում պետությանը և հողը, ուր շինված և ձեռնարկը և ձեռնարկն իր ամբողջությամբ) հետեղականորեն սոցիալիս-

առկան տիպի ձեռնարկների հետ, այն ժամանակ այսուհեղ ծագում և հարց ձեռնարկների յերբորդ տեսակի մասին, վորոնք առաջ սկըզբունքային նշանակության տեսակետից ինքնուրույնություն չունեցին. խոսքը վերաբերում և կոսպերատիվ ձեռնարկներին: Մասնավոր կապիտալի ժամանակ կոսպերատիվ ձեռնարկները տարրերվում են կապիտալիստական ձեռնարկներից, վորովես կոլեկտիվ ձեռնարկներ մասնավոր ձեռնարկներից: Պետական կապիտալիզմի ժամանակ կոսպերատիվ ձեռնարկները տարրերվում են պետական-կապիտալիստականից նախ իրը մասնավոր ձեռնարկներ և յերկրորդ՝ իրը կոլեկտիվ ձեռնարկներ: Մեր գոյուրյուն ունեցող իրավաբարգում կոռպերատիվ ձեռնարկները տարրերվում են մասնավոր-կապիտալիստականից, իրը կոլեկտիվ ձեռնարկներ, բայց չեն տարրերվում սոցիալիստական ձեռնարկներից, յերեսի նրանք հիմնված են հողի վրա և արտադրության միջոցները պատկանում են պետությանը, այսինքն բանվոր դաստկարգին:

Ահա այս հանգամանքը մեզ մոտ լիովին հաշվի չեն առնում, յերբ խոսում են կոռպերացիայի մասին: Մոռանում են, վոր մեր պետության իրավակարգի առանձնահատկության շնորհիվ կոռպերացիան մեզ մոտ ստանում է բացառիկ նշանակություն:

Յերես առանձնացվեն կոնցեսիաները, վորոնք, տեղին և ասել, մեզ մոտ վոչ մի շոշա-

փելի զարգացում չեն ստացել, այն ժամանակ կոռպերացիան մեր պայմաններում հանախ զուգադիպում ե սոցիալիզմի հետ» (նույն տեղ) :

Այդպիսով մեր ամբողջ տեսակետի սոցիալիզմի մասին հիմնովին փոփոխությունը կայանում է նրանում, վոր մենք սոցիալիզմի կարող ենք մոռենալ նաև մանր արդյունաբերական արտադրողների կոոպերացիայի միջոցով, արհեստագործական, ավելի ճիշտ, արդյունաբերական կոռպերացիայի միջոցով:

Յերկրի ինդուստրացման տեսակետից արհեստագործական կոոպերացիայի մեջենայնացման զարգացումը մի գրական յերեսոյթ է — յերկրի ինդուստրացման մի խողովակ է:

Ցենզային ձեռնարկների թիվն արհեստագործական կոոպերացիայի մեջ արդեն զգալի յե և նրանց արտադրանքը հասնում է 315 միլիոն ռուբլու:

Արհեստագործական կոոպերացիան իր վրա պետք է վերցնի այս ճյուղերի ինդուստրացումը, վորոնց մեջ գերակշռող ձեւը հանդիսանում է մանր արտադրության և, առաջին հերթին, նրանց, վորոնց պետարդյունաբերությունը կամ բոլորովին չի ընդգրկել կամ աննշան չափով ե ընդգրկել։ Կյանքը ստիպում է մի քիչ դուրս դալ այդ ֆորմուլայի սահմաններից։ Արհեստագործական կոոպերացիան իրեն վրա պետք է վերցնի կոոպերատիվ հի-

մանքներով կազմակերպելու արդյունաբերական աշխատանքի կոռուկերացումն, խոկ մի քանի արտադրություններ ել՝ հիմնովին սկզբից որինակ, շինարարական նյութերի արտադրությունը:

Ներկայումս արհեստագործուկան կոռուկերացիան բնագրի մանր արդյունաբերությունը, համաձայն Միութենական ԺՖՄ-ի: Անդամակիչ թվերի, հետեւյալ ձեռով.

ԱՐՁԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՌԵՐԱՑԻԱՅԻ ՃՅՈՒՂԵՐԻ ԿԱԶՄԸ 1928—29 թ.

Ժյուղերի անունը	Զբարգած ան- ձանց թիվը	Ընդհանուր առաջրանի- ւությունը
-----------------	--------------------------	-------------------------------------

Փայտագործություն	168,7	126,2
Կաշվե կոշկակարություն	110,3	156,5
Գևգարվեստ արդյունաբերութ	10,4	18,9
Մետաղագործություն	71,1	117,3
Բամբակի ջուլհակություն	72,6	73,7
Դերձակություն	77,8	146,5
Հյուսվածքագործություն	44,5	44,8
Հացթուխներ	30,8	195,1
Երեւանյան արտադր	64,6	36,2
Թաղիքե կոշկակարություն	24,0	29,7
Գորդագործություն	23,7	4,3
Կաշվեկործություն	14,9	37,6
Կանեփ-պարանագարծություն	9,5	7,2

Փոխադր .	միջոցների արտադր .	13,0	21,8
Մոբթեմուշտակագործ .	.	10,9	29,9
Հանքերի , կավի և քարի վե-			
րամշակություն .	.	15,5	18,1
Ալյուրաղացի արդյունաբ .	.	4,1	18,9
Հրուշակարանի արդյունաբ .	.	5,0	43,7
Թամբառսահմանագործութ .	.	6,2	16,9
Ցերչիկի-ապուխտի արտադր .	.	4,1	39,0

Այսուեղ մենք տեսնում ենք դլիսավորապես հենց այն առանձնահատուկ ճյուղերը, վորոնց մեջ գերակշռող ձեւը հանդիսանում է մանր արտադրությունը :

1928—29 թվին ընդհանուր թվերով արհեստագործական կոոպերացիան համախմբել է 1 միլիոնից ավելի զբաղված անձ և տվել է համարյա մոտ 1,5 միլիոնդ ոռորդու արտադրանք :

Արհեստագործական կոոպերացիայի հընդամյակը պարզ կերպով ընորոշում է նրա արդյունաբերական կառուցվածքը :

Հնդամյակի վերջում արհեստագործական կոոպերացիան ընդգրկելու յե 3,6 միլիոն ֆիզանձ և տալու յե 5,9 միլիոնդ ոռորդու արտադրանքը : Այդ թիվը կազմում է կոոպերացման յենքական ամբողջ տնայնագործական մասսայի 70 տոկոսը :

Հստ հիմնական արտադրությունների արհեստագործական կոոպերացիայի ֆիզանձանց թիվն ու արտադրանքն արտահայտվելու յե հետեւալ ձեռով .

Հայոցի անունը	Զբաղված ան- ձանց թիվը (հա- տմ.՝ 1932-33թ.)	Հնդկանուր ար- տադրաները մի- լիոն ռուբլիներ- ում՝ 1932-33թ.)
Փարապորձություն	698,5	697,0
Մասապարձություն	302,2	540,0
Հանքերի քարի և կոմի գի-		
բամշակաթյուն	317,5	224,6
Երտ թիւում չին. նյութ. ար.	280,0	193,4
Կոչին կոչկարություն	359,6	545,2
Դերձակաթյուն	350,0	515,2
Գեղարվեստ. իրերի արտադր.	221,0	84,0
Հյուսվածքազորձություն	180,5	176,6
Թաղիքի կոչկարություն	102,4	119,1
Հուցիւխներ	97,7	683,2
Դորդապորձություն	94,0	43,3
Կոնեկտ-օպտրանապորձութ.	31,0	30,0
Փախազր. միջոցների արտադր.	36,0	68,8
Մորթե-մուշտակապորձ	34,5	68,5
Կոչինըորձություն	20,4	37,0
Հրուշակարանի արտադր.	35,0	245,0
Ցերչիկի արտապրություն	15,2	221,2
Թամբա-սանձապորձություն	18,3	68,8

Առաջիկա հնդամյակում արհեստագոր-
ծական կոսովերացիան պետք է իրականացնի
անայնապորձական արտադրությունների ին-
դուստրացումը, զորձագրելով յերկու սկզբա-
րունք. կատարել ամենաանհրաժեշտ ներզր-
բումներ կապիատալ չինաբարությունների հա-
մար և ներզրավել մաքսիմալ չափով բանվա-
րական ուժ, նա պետք է միատեղ դասավորի

մեքենայնացումն ձեռքի աշխատանքի հետ, մեքենայնացված ձեռնարկների աշխատանքը՝ տնայնագործի տանն աշխատելու ձի հետ, կազմակերպելով նրան սպասարկելու համար կիսաֆարբիկատների արտադրություն և դառնադան ոժանդակ ձեռնարկներ։

Հետևյալ հենգամյակը վերամշակելիս, արիեստագործական կոռպերացիան արդեն կարող կլինի մոտենալ իր ձեռնարկները լիովին մեռնայնացման յենքարկելու տեսակետից։

Այդպիսով, արհեստագործական կոռպերացիան պետք է հանդիսանա կազմակերպիչ արդյունաբերության մի շարք վորոշակի տանձնահատուկ ճյուղերի համար։ Այն ժամանակ, յերբ պետարդյունաբերությունը ծանր և թեթև ինդուստրիայի իշխող ճյուղերի կազմակերպիչն է հանդիսանում, արհեստագործական կոռպերացիան վորոշակի տուանձնահատուկ ճյուղերի կազմակերպիչն է հանդիսանում։

Մի շարք ճյուղերի և ահագին թվով համախմբված մասսայի ընդգրկումը ստիպում է թե քաղաքական և թե տնտեսական տեսակետից առանձնակի ուշագրություն գարձնել արհեստագործական կոռպերացիայի վրա։

Արհեստագործական կոռպերացիայի առանձնակի արագ թափով աճումն ու նրա համար հետագա տարիներում ծրագրված հրակայական զարգացումը հարց և հարուցում կոռպերացված տնայնա-արհեստագործական

մասսաների և նրանց հիմնական կատեգորիա-ների սոցիալ-քաղաքական դրություն մասին կոսպերացված աշխատանքային անայնազործների, վորոնք աշխատանքը շարունակում էն տանը՝ անհատական յեղանակով, և արդեն կոսպերացված խոչոր ընդհանուր արտադրությունում աշխատավների հարցը:

Այն անայնազործները, վորոնք անցել են աշխատանքի խոչոր կոսպերացված արտադրության մեջ, արդեն կորցրել են իրենց կազմ անայնազործական արդյունաբերության հետ:

Փոքրիկ ընդհանուր արհեստանոցներում աշխատագ արտելի անդամների համար իրենց ձեռնարկության նկատմամբ դեռևս մնում է անհատական սեփականության գիտակցությունը, իսկ յենդային ձեռնարկների մեջ այդ գիտակցությունն այլևս չկա: Այդպիսի ձեռնարկներում սովորաբար սկսուաների բաշխում չի կատարվում և լուծարքի գեղքում գույքը չի բաժանվում արտելի անդամների մեջ, այլ փոխանցվում և վերադաս միաւթյունը՝ աշխատավարձը կանոնավորվում է և մեծ մասամբ մոռենում և պետքանարկների բանվորների աշխատավարձին:

Խոչոր կոլեկտիվ արտադրության մեջ աշխատագ տնայնազործներն ամրագչ բանվոր դասակարգի հետ սոցիալիստական հասարակություն, սոցիալիստական տնտեսություն և կուսացում:

Մեր առաջ իր ամրագչ սրությամբ գըւ-

վում և կազմակերպված կոռուպերացիած մաս-
սայի, վորի թիվն ըստ վերստուգիչ թվերի
հասնում և 1 միլիոնի, իսկ հնգամյակի վեր-
ջում 3,6 միլիոնի, իրավական և քաղաքական
դրության հարցը: Այդ մասսան պահանջում է
կանոնավորում, սօցիալական ապահովագր-
ում, հարկային արտօնություններ, կուտ-
կրթական աշխատանքներ և կուսակցական զե-
կավարություն:

Բնդիանուր արհեստանոցներում աշխա-
տողներն հարկադրման և կոմունալ սովաստր-
կումների նկատմամբ հավասարեցված են
վարձու բանվորների հետ:

Սոցապգանձարկղները, ձեւական նկատա-
ռումներով, չեցին կարող սպասարկել այդ-
մասսային, քանի վոր սրանք համախմբում են
միայն վարձու բանվորներին, այդ պատճառով
ել հարց ծագեց փոխապարձ ապահովագրման
հիմունքներով կազմակերպել տնտյանադորձնե-
րի և արհեստագորների ապահովագրություն:
Վերջին ժամանակներու տնտյանա-արհեստա-
գործների փոխողնության գանձարկղները մեծ
ծավալ են ստացել, բայց զեռևս նրանք չեն կո-
ռողացել բնդգրկել սոցապի ամրող Փունկ-
ցիաները: Անհրաժեշտ է կազմակերպել կոո-
պերացված բանվորական ուժի բաշխումը,
ընդարձակել ակումբների ցանցը, վոր զեռևս
անբավարար և զարգացած, ուժեղացնել կոո-
պեկավարությունը, վորը զեռ անբավար և
և այլն:

Անհրաժեշտ է բնորոշել մանր արդյունաբերության առանձին խմբերի հետակարգերը։ Բայց վարում, վերը հիշված պատճենների հետեւանքով անհրաժեշտ է, այսպես առած, փոխազդերից դուրս հանել պետական, կոոպերատիվ և մասնավոր կոոպերատիվական ձևոնարկեները։ ԲնդՀանրապետության մանր ինդուստրիալիզացման և կոոպերատիվ արդյունաբերության մանր ինդուստրիալիզացման համար վորոշ նոխազդյաներ անինի։

Բայց նու ամբողջ պետական և կոոպերատիվ արդյունաբերությունից մի ինչ վոր առանձնահատուկ և առընթերվազ բան չի հանդիպում։ Մանր մասնավոր-կոոպերատիվական ձևոնարկեների և մանր առընթերվազ արտադրողների կոոպերատիվական առընթերի բախուը վորոշվում է ընդհանրապետության մասնավոր կոոպերայի հակառապրազ։ Աւրույն առանձնահատկություններով առընթերվազ ևն արձեստագործները։

Տնային բանվորները հանդիսանում են այն խոմքը, վորի նկատմամբ անհրաժեշտ և վորչացացներու ամենավճռական պայմանագրագում։ Աւրույն առանձնահատկություններով առընթերվազ ևն արձեստագործներն ու տնային բանվորները։

«Եշխառասնքը պնորդ-միջնորդի համար, տում և վենինը, հանդիսանում է, հետեւապես, կոոպերատիվմի հետամնաց ձեւ, իսկ ներկա հասաւակություն մեջ առանձնակի վատացում— և անք շահագործված են զնորդ-միջնորդների մի ամբողջ շարքու (առ անց system), ցրված են, ստիպված են լինում բա-

վականապնալ ամենացածր աշխատավարձով, աշխատում են վերին աստիճանի հակառակող—ջապահական և չափից գուրս յերկար բանվորական որվա պայմաններում, իսկ ամենագրլիավորը—այնպիսի պայմաններում, յերբ չափագանց դժվարանում և արտադրության վրա հասարակական վերահսկողություն սահմանելու հնարավորությունը» (տոմ Ա յերես 447):

Մոտավորապես նույնն է արձանագրում նաև ընկերության ներկա ժամանակի համար.

«Հանն աշխատելու սիստեմը մեկ կողմից բանվորներին բաժան—բաժան անելով հենց առտադրության ռշոցեսի մեջ, քանզում և բանվորների շարքերն ու դրանով թուլացնում նրանց բնողդիմությունը ձեռնարկատերերի հանդեպ, մյուսից՝ դժվարացնում է աշխատանքի վերաստուգողությունը և որովհմիությունների կողմից աշխատանքի պայմանների վրա հսկողություն սահմանելը, իսկ վերատեսչությունը՝ հետեւյ հարկերի գանձմանը»:

Այդ պատճառով ել, վերը մեջ բերած ԽՍՀՄ ԺԿՄ վորոշման համաձայն, պետք է հարց զրվի տանն աշխատող արտադրողներին ազատելու գնորդմիջնորդի և բաշխիչի չահագործումից, նրանց շուկայի համար աշխատելու փոխադրելու, այսինքն, ինքնուրույն արդյունաբերական ապրանքարտադրողների շարքերն անցնելու մասին։ Դրա համար նյանք ձեռնարկատերերի ցույց տված ՇՓան-

դակության փոխարեն պետք է կուլմնակի ոգ-
նությունն ստանան՝ վարկի, վաճառահան-
ման, նյութերի և այլ ձևով։

Տվյալ գեղգում խոշոր նշանակություն
են սոսնում արհեստագործական միություն-
ների հաստրակ տեսակները—մատակարարող-
գումառահանման և արհեստագործական-վար-
ելունց բարերարությունները։

Արհեստագորները մեր պայմաններում
հանդիսանում են բավական կենսունակ
խոմք։ Սպասողի անհատական և ահանջները
որոշակնել են այդ ձեզ նաև զարգացած ին-
գուստին յերկրներում։ Բացի այդ, զանո-
գան վերանորոգումները (կոչիկ, հագուստե-
զեն, թիթեղյա ամսնեզեն և այլն) առաջ նո-
րերում անմիջապես պատիրատու-սպասողներ-
համար աշխատելու անհրաժեշտությունը։

Այդ խմբի նկատմամբ նույնպես հիմնա-
կան ձեւեր հանդիսանում են արհեստագործա-
կան-վարկային միությունները, իսկ առան-
ձին գեղգերում ել նաև արտագրական ար-
տելները։

VIII. ԱՐԵՍՏԱԳՈՒՇԱԿԱՆ ԿՈՌԵՐԱ- ՑԻԱՅԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՅԵՎ ԶԱՐԳԱՑ- ՄԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Արհեստագործական կոսպերացիայի վրա
որբանային ներգործումն իրականացվում է,
որբանային կերպով նյութեր մատակարարե-

լու, նպատակային վարկավորման և համապատասխան ձեռով նրա արտադրանքի վաճառուհանման միջոցով (արտադրանքի յետ հանձնում), ինչպես և՝ ամեն տեղ, այնպես և՝ արհեստագործական կոռավերացիայի մեջ կուսակցական զեկավարությունն իրականացվում և նրա կուսակցական կորիզի միջոցով:

Պլոնտյին մատակարարումը տարեցտարի արհեստագործական կոռավերացիայի մեջ աճում է: Տարեցտարի աճում և նաև նրա բանկային վարկավորումը, արտադրանքի ոլլանային ընդգրկումը և զեկավար մարմինների մեջ կուսակցական կորիզը:

Արհեստագործական կոռավերացիայի հետագա զարգացման համար պայմաններ ստեղծելու նպատակով անհրաժեշտ և գառնում ուժեղացնել նրա կիսաֆարբիկատների պրանային մատակարարումը և վորոշ պայմաններով նրան իրավունք վերապահել գյուղատրնտեսական մթերքների ինքնամթերումներ կատարել: Անհրաժեշտ և նաև ուժեղացնել բանկային վարկավորումը:

Պետության կողմից արհեստագործական կոռավերացիայի զարգացումն ապահովելու պայմանների շարքում, անհրաժեշտ և ազգահավել նաև նրա զարգացման կազմակերպչական պայմանները, վորոնք կախումն ունեն հենց իրեն արհեստագործական կոռավերացիայից:

Հիմնուկան պայմանը կայանում և նրա

կազմակերպչական կառուցվածքի ձիչու կազմակերպչական մեջ:

Համախմբված Փիզանձունց խոշորաթիվ մասնակի, իրավական անձանց շատությունը (12.755 արհեստագործական կոոպերատիվներ) և ճյուղերի բազմապիսությունը ուժանաջում են այդ հարցին առանձնակի լուրջ բռնկցում ունենալ:

Եերկու ժամանակ արհեստագործական կոոպերացիայի կազմակերպչական կառուցվածքը Վաեկոպրոմուսվետի կողմից վեր և ածվել (9 անիվերաց բազմաճյուղանի հանրապետական կենտրոնների և 187 միությունների յերկրային, գովառառյին և հատուկ միությունների):

Շրջանայնոցման հետեւնքով կազմակերպչական կառուցվածքը հետեւյալ պատկերին ունի հանրապետական կենտրոն, արհեստագործական կոոպերացիայի յերկրային բյուրո, գովառառյին և հատուկ միություններ:

Գովառառյին և շրջանային հանդիսանում են կամ արհեստագործական ունիվերսալ (բազմաճյուղյան) կամ սրբհետագործական հատուկ (միաճյուղ) միություններ։ Գյուղկոոպերացիայի հետ խուն միությունները շահագիտանում են միավորներ։

Արհեստագործական կոոպերացիայի արվյալները ցույց են տալիս, վոր ամենաեական, շահամիտ և վարկունակ հանդիսանում են հո-

տուկ միությունները և նրանց մեջ համեմատաբար ավելի ակտիվ և դրված արտագրական ղեկավարությունը:

Խառն և ունիվերսալ միությունները կրում են ավելի շատ առեւտրական բնույթ, քան արտագրական: Այդ պատճառով ել պահանջի շափանիքածեշտություն և հանդիսանում արիեստագործական կոռպերացիայի միությունների բաժանումն ըստ մասնագիտական նյութերի:

Արհեստագործական կոռպերացիայի արդեն յերիան բերած հսկայական թափն և այն, վոր ծրագրված և ունենալ հնգամյակի ընթացքում, արհեստագործական կոռպերացիային առաջադրած խնդիրների բարդացման հետևանքով (կապիտալ շինարարություններ): Նույնպես անհնարին և գառնում ղեկավարելնրան հանրապետական կենարունների միջոցով: Կառկտծից դուրս և, վոր պահանջվում է արհեստագործական կոռպերացիան վեր ածել բայ մասնագիտական ձյուղերի սկսած ներքեցից մինչեւ վերև:

Մի ուրիշ լուրջ հարց, վոր կանգնած է արհեստագործական կոռպերացիայի առաջնրա հետագա տարիների աճման հետեւանքով—դա տեխնիկական կազմը և ղեկավարական կազմի հարցն և, վորը նրա մեջ համարյա բացակայում է: Դրա հետևանքով հարց է ծոված լայնացնելու անայնագործական ԲՈՒՀ և տեխնիկումները, վորոնք կպատրաստեն ճարտարագետներ և տեխնիկ-կոռպերատորներ.

Հետեւալ լուրջ՝ արհեստագործական կոսովերացիալի ներքին կազմակերպչական հարցը հանդիսանում է նրա փայտագործարային քաղաքականությունը։ Արհեստագործական կոսովերացիալի փայտագործների շափր։ Ներկա ժամանակ շատ հաճախ չբավորների համար արգելվ է հանդիսանում կոռպերացիային անդամագրվելու գործում։ Անհրաժեշտ է փայտագործների գիֆերենցիա մաշնել համաձայն անտյագործի անհետական կարողության և փոյշերի վճարման յերկայնացում, զանձելով այն հետզհետեւ աշխատավարձից։

Ապա արհեստագործական կոռպերացիալի համար կազմակերպչական հարց և հանդիսանում առցիտալական կազմի հարցը։ Անհրաժեշտ է մաքրել արհեստագործական ընկերությունները, մասակարարող-վաճառահանման ընկերությունները մանր՝ կապիտալիստական կուտակալին տարրերից, վոքրիկ տերերից, վորոնք շոհագործում ևն վարձու բանվորներին։ Կոռպերացման քաղաքականությունն ըստ եյտթյան պետք է լինի զասակարգությին քաղաքականություն, վորք ճշտողեն պետք և համապատասխանե XV կուսհամագումարի վորոշումներին—ներդրավել կոռպերացիալի մեջ ամրող չքավորությունը և միջակների մեծամասնությունը։

Վերջապես, անհրաժեշտ է կանոնավորել աշխատավարձը, մուեցնելով այն համապատասխան վորակի վարձու բանվորների աշխա-

տառվարձին—կուլտ-կրթական հպատակի,
փոխ-ոպնության գանձարկղին, հատուկ դրա-
մագլուխների Փոնդին (նյութերի, արդյունա-
բերական շինարարության և այլն) մուծում-
ներ կատարելու միջոցով և արգելել ողուտ-
ների բաշխումը:

Արհեստագործական կոսպերացիայի ներ-
քին կազմակերպչական հարցիշարքին են պատ-
կանում նաև ներքին կոսպերատիվ կուտա-
կումները, հատկապես նրա կապիտալ շինա-
րարությունների կարիքների համար. թեև
նրա սեփական միջոցները տարեցտարի աճում
են, բայց և այնպես դեռ հեռու յեն բավարար
լինելուց։ Նրա սեփական միջոցների ուժե-
զացման ոգտակարության տեսակեալց, վոր
անհրաժեշտ ե ինչպես նրա քրջանաւություն,
այնպես և հատկապես 60 միլիոն ներդրում-
ներն ապահովելու համար, պետք ե նրա սե-
փական միջոցների լրացուցիչ մոբիլիզացիա
կատարել—փայտվաճարների բարձրացումով,
ներքին կոսպերատիվային և տնայնագործնե-
րի փոխառվությամբ, հատուկ ավանդների
ներդրավումով, շահավետության ավելացու-
մով և այլն։

Արհեստագործական կոսպերացիային զարկ
տվող ձեռնարկումները մեջտեղից շպետք և
վերացնեն շկազմակերպված տնայնագործնե-
րին ոժանդակելու հարցը, ավելի ևս, վոր նր-
անք արհեստագործական կոսպերացիայի
շարգացման բազան են հանդիսանում, հավա-

բուժ են նրան համար վորոշ վորակյալ ընտկազմ, իսկ արհեստագործական կոսովերացիան չի կարագանում հասցնել նրանց կազմակերպչութեն լուսավորելու և կոսովերատիվութեն ձեռիկերպելու:

Այսակից ծագում է ողբոֆիլրթության, աշակերտության, բանվորության վորակյալ ու յժի ընդարձակ կերպով արտադրելու հարցը: Մեր ողբոֆ-առեխնիկական դպրոցների ցանցը չափից գործ փոքր և և չի հանում անդամ նախապատերազմյան չափերին:

Ապա դրվում է անայնագործներին նյութերով մատակարարելու հարցը, վարկավորման, իրերի վաճառահանման, վորանցով մինչև այժմս զբաղվում եր գնորդ-միջնորդը, բաշխիչը: Նրանց մատակարարումը, վարկավորամին և արագագանքի կանուգակացիան պետք է կատարեն արհեստագործական վարկային և մատակարարող-վաճառահանման ընկերությունները, հետզհետե նրանց ներգրամերով արհեստագործական կոսովերացիայի սիստեմի մեջ:

Վերջապես, դրվում է գործազուրկ տնայնագործների բանվորական ույժի սոցիալական ապահովագրության և կանոնավորման հարցը: Անհրաժեշտ է ներգրավել փոխողական թյան գանձարկղի մեջ չկոսովերացված անայնագործներին և կազմակերպել գործազուրկ անայնագործներին արտելների մեջ բաշխելու հարցը:

Լենինը բացասապես և արտահայտվել կապիտալիստական պայմաններում տնայնադործի համար սպասարկում կազմակերպելու առթիվ, վորովհետեւ կապիտալիստական պայմաններում այդ կլիներ պալիատիվ և նարոդնիկների կապիտալիզմի զարգացումը կանգնեցնելու վործի կրկնողությունը կհանդիսանար—ուստոպիական սոցիալիզմի մի այլ տեսակը։ Լենինը մատնանշել է, վոր կապիտալիստական պայմաններում այդ բոլոր ձեռնարկումները, վերջին հաշվով, գործնականում գալիս են ոգնելու և ոժանդակելու «տրնտեսավար գյուղացուն», «մանր ֆարբիկաներն» կամ «գնորդմիջնորդին», վոր «ընդհանուր հիմունքով» (կապիտալիստական Դ.Շ.), ապրանքային տնտեսական վարկով, պահեստներով, բանկերով, տեխնիկական խորհուրդներով և այլն անխուսափելիորեն ողտավում են նախ և առաջ և ամենից շատ մանր բուրժուաները»։

Այլ բան և խորհրդային արհեստագործական պետությունում, ուր տնայնազործական արդյունաբերությունը (XV կուսամագումարի ձեակերպումը) հանդիսանում է սոցիալիստական խոշոր արդյունաբերության միանգամայն անհրաժեշտ լրացուցիչ մասը։ Այդ ժիկնույն ձեռնարկումներն ստանում են բոլորովին այլ գաղափար, այլ նշանակություն և այլ բնույթ։

Մենք քննեցինք տնայնարհեստագոր-

ծական արդյունաբերության հասկացողությունը, մանր արդյունաբերության սոցիալ-տեսական կազմը, հեռանկարներն և խոչոր արդյունաբերության վերածվելու ուղիները: Մենք տեսանք, վոր տնայնա-արհեստագործական արդյունաբերություն հասկացողությունը հանդիսանում է վոչ գիտական և սխալ: Մենք քննեցինք Լենինի կլասիֆիկացիան և մանր արդյունաբերության կազմից տուանձնացրինք մանր արդյունաբերական ապրանքարտագրողների աշխատանքային շերտերը: Մենք բնորոշեցինք մանր արդյունաբերության հեռանկարները, վորպես նրա յերկարաժամկետ գոյություն ունենալու հեռանկարներ, յերբ վերջին հաշվով պետք է առանց բարդությունների վերածվի խոչոր արդյունաբերության դիմումների պարագաները: Մենք բնորոշեցինք արհեստագործական կոռպերացիայի խնդիրները կազմակերպչական բնագավառում մի շարք արտադրությունների ինդուստրացման նկատմամբ: Վերջապես, մենք պարզեցինք այն ձեռնարկումները, վոր անհրաժեշտ են արհեստագործական կոռպերացիայի ամբազնդման և տնայնագործական արդյունաբերության զարգացման ու նրա միջից մասնավոր կապիտալին դուրս վանելու համար: Պրոլետարիատի գիկատառութայի ամրացման և սոցիալիստական դիրքերն արագ զրավելու առաջխաղացման, ապրանքային սակի և գործադրկության մեջ-

մացման ու մանր արդյունաբերության ցրվա-
ծություն և տարերային բնույթի հաղթահա-
րելու շահերը պահանջում են միաժամանակ
և՛ նրա զարգացումը և՛ նրա համայնացումն
արիետագործական կոռպերացիայի միջոցով։
Այդ պատճառով ել արհեստագործական կոո-
պերացիան դառնում է մեր սոցիալիստական
կարենք փարոսներից մեկը, քանի վոր խոսքը
ժերարերում և 6 միլիոն աշխատավոր տնայ-
նագործների և արհեստավորների հաղմա-
կերպմանն ու նրա 8 միլիարդ ռուբլու արտա-
դրանքին։



ՑԱՆԿ

Եջ

I.	Հիմնական քանակական ցուցանիշները	1
II.	Սոցիալ տնտեսական կազմը, ըստ լենինի կլասիֆիկացիայի	10
III.	Մանր արդյունաբերական ապրանքաբառա- դրողներ, արհեստավորներ և տնային բանվորներ	20
IV.	Մանր արդյունաբերության և սոցիալ- տնտեսական կազմը ներկա ժամանակ	30
V.	Մանր արդյունաբերությունը նախապա- տերագյան շրջանում Ռուսաստանի մեջ և արտասահմանում	44
VI.	Մանրագույնաբերության հեռանկարները ներկա ժամանակ	50
VII.	Մանր արդյունաբերության զարգացման սոցիալ-տնտեսական տենդեցները	56
VIII.	Արհեստավործական կոոպերացիայի ամ- րագնդումը և զարգացման ձեռանարկումները	73

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039295

[1743]

ԳԻՆՅ 20 ԿՐՊ.

A I
4355